

ՀՅԴ Պատմութիւն





ԴՐՕՇԱԿ



Ապրիլ N04 (1619) 2010

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմաթերթ



ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմական թերթ





"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Բարոյականութիւն եւ քաղաքականութիւն 2

Խորհրդաժողով

1. Սոցիալական արդարության և համերաշխության հիմնահարցերը Հայաստանում 4

2. Սոցիալիստական մտքի զարգացումները 7

Նյութեր թուրք պատմաբանների համար

Տրապիզոնի հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունը 13

Նամակ խմբագրությանը

Սթափվենք և նախապատրաստվենք՝
2015 թվականը մոտենում է 16

Պատմական

Խրիմյան Հայրիկի ջանքերը հայ-քրդական համագործակցություն գոյացնելու ուղղությամբ 20

Միջազգային

Լարվածությունը թուրք-իսրայելյան հարաբերություններում
և Հայոց ցեղասպանության խնդիրը 23

Տեղեկանք

Թուրքական գործոնը հետխորհրդային որոշ հակամարտություններում 30

Նվիրյալներ

Մեծն Շահէն 38

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Մի մեծ շարժման սուներները 44

Նոր գրքեր

Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը
երգ-երաժշտութեան վրա 46

Պատկերասրահ

Մկրտիչ Սեդրակյան 48

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

Digitized by ARF PR Office

Բարոյականութիւն եւ խղճմտակամութիւն

Ջրում խեղդուողը ձեռքը յարդին էլ է գցում: Օսմանեան կայսրութեան օրինական ժառանգորդին նման յարդ է թում հայ-թուրքական արձանագրութիւններում տեղ գտած «պատմական յանձնաժողովի» գաղափարը, որի ծածուկ նպատակը պիտի լինի Հայոց ցեղասպանութեան իրողութեան ուսումնասիրութիւնը երկարաձգել այնքան, որքան անհրաժեշտ է մարդկային յիշողութիւնը առասպելաբանութեան մէջ տարրալուծելու, դեռեւս արեան հոտ արձակող եւ շօշափելի ցաւով նուացող ողբերգութիւնը անյիշելի պատմութեան խորշերը հեռացնելու համար:

Պատմութեան այդ խորշերում նմանատիպ կամ գրեթէ նմանատիպ դէպքերն ու իրադարձութիւններն այլեւս ո՛չ դատ են պահանջում, ո՛չ դատաստան: Ինչ եղել՝ եղել է, հո ետ չե՞ս պտտեցնելու պատմութեան անիւը: Լաւագոյն դէպքում այդ դէպքերն ու իրադարձութիւնները վերածւում են վէպի, թատերախաղի, կինոնկարի, եւ անպայման հերոսականացումով:

Պարզ է, որ ահաւոր մեղքով ծանրացած թուրքական մարմինը ջրի երեսին չի մնայ փրկութեան այդ օղակով. կամ ջրասոյզ կը լինի՝ ձկներին կեր կը դառնայ, եւ կամ՝ վերածնութեան հրաշքով, կրկին ափ կ'ելնի՝ արդէն մաքրագործուած, նորացուած: Բայց արի ու տես, որ բարոյա-

կանութիւնից ձերբազատուած քաղաքականութիւնը, ահա քանի տարի, յարդին չվստահելով՝ գերան է մատուցում թուրքին: Ո՛չ միայն թոյլ չի տալիս նրան խեղդուել, ձկներին կեր դառնալ, այլեւ խանգարում է վերածնուել, մաքրուել: Օրը տասն անգամ պէտք է կախել նրան, ով առաջինը յայտնագործեց, թէ բարոյականութիւնը քաղաքական կատեգորիա չէ: Նզովեալ այս հռչակագիրն օրինականացրեց անբարոյականութիւնը: Օրինականացուած այս անբարոյականութիւնը հերոսացրեց բարոյազուրկներին: Հերոսացած բարոյազուրկները գլխիվայր շրջեցին բազմաթիւ հասկացութիւններ, որոնց կիրառումն այլեւս ծաղրուածանակ է դարձել: Ի՞նչ պետական շահի մասին է խօսքը, երբ այդ շահը վերածուում է յանցակցութեան: Ի՞նչ բարեկեցութեան մասին է խօսքը, երբ գանձարանդ լցնում ես թալանով: Նպատակայարմարութե՞մբ են, արդեօք, ճիշտ խօսում կամ կեղծում, թաքցնում կամ բացայայտում յանցանքը: Հաշտութի՞ւն է կոչւում այն գործարքը, որի պարտադրանքով պիտի լռի տուժածը: Եւ այդ լռութե՞մբ է պայմանաւորուելու խաղաղութիւնը:

Անբարոյականութիւնը հասել է այն աստիճանի, որ փաստն ընդունելով՝ զլանում են գնահատական տալ: «Այո»-ի եւ «բայց»-ի անիմաստ խաղ է գնում. չես հասցնում գոհանալ փաստի ընդունմամբ, երբ վրայ է հասնում «բայց»-ը: Փաստն ապացուցելու համար ոչ մէկին պատմական յանձնաժողով պէտք չէ. փաստն ապացուցուած է: Հէնց իրենք՝ թուրքերն են ապացուցել փաստը մի շարք դատավարութիւններով: Գնահատական տալու, աւելի ճիշտ՝ գնահատական տալը յետաձգելու համար է անհրաժեշտ պատմական այդ հանձնաժողովը:

Անբարոյականութեան խաղի կանոններից հմտօրէն օգտւում է, սովորաբար, ամենաանբարոյականը: Մինչ միւսներն անբարոյականութեան դպրոց են յաճախում, նա հասցնում է ապականել մաքուր մնացած տարածքները: Թէ՛ աշխարհագրական եւ թէ՛ հոգեկան: Աշխարհին, Եւրոպային թւում է, թէ ժամանակը, առաջադիմութիւնը, քաղաքակրթութիւնը բարեփոխում են Թուրքիան: Այնինչ աշխարհը, Եւրոպան են չարափոխւում: Քաղաքակիրթ աշխարհը ապրելակերպի, վարուեցողութեան օրինակ չէ Թուրքիայի համար: Թուրքիան է օրինակ դառնում քաղաքակիրթ աշխարհի աչքին: Եւ նա արդէն չի խնդրում, այլ պահանջում է գերան գցել ջուրը, որովհետեւ մեղքից ծանրացած իր մարմինն այլեւս չի կարող ապաւինել յարդին:

Գերան է պէտք: Եւ գերան գցող:

2010 թվականի մարտի 25-26-ը Երևանի «Կոնգրես» հյուրանոցում կայացավ ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի կազմակերպած՝ «Սոցիալիստական մոտեցումներ Հայաստանի մարտահրավերներին (գլոբալ հեռանկարներ, տեղական իրողություններ)» թեմայով միջազգային խորհրդաժողով: Ռուսաստանից, Իրանից, Հունաստանից, ԱՄՆ-ից, Չիլիից, Արգենտինայից, Շվեդիայից ժամանած բազմաթիվ մասնագետներ հայ գործընկերների հետ քննարկեցին ընկերվարական գաղափարախոսության խնդիրները և նրա տեղն ու դերը արդի քաղաքական ու տնտեսական աշխարհում:

Այս համարից սկսած «Դրօշակ»-ը մտադիր է հրապարակել խորհրդաժողովում հնչած ուշագրավ զեկուցումներից մի քանիսը: Խորհրդաժողովի նյութերն ամբողջությամբ կհրատարակվեն առանձին գրքույկով:

Սոցիալական արդարության և համերաշխության հիմնահարցերը Հայաստանում

Արմեն ՌՈՒՍՏԱՄՅԱՆ

Հետխորհրդային ժառանգության անմիջական հետևանքների պայմաններում գործող ընկերվարական ուժերի ընդհանուր խնդիրը եղել և մնում է, ի լրումն այլ հարցերի, ցույց տալ, որ խորհրդային տիպի պետության փլուզումը ոչ թե հերքեց ժողովրդավարական սոցիալիզմի գաղափարը, այլ ավելի պարզորոշ դարձրեց անհրաժեշտությունը՝ կողմնորոշել այդ գաղափարը դեպի խորքային արժեքներ: Հատկապես անցումային շրջանին բնորոշ դժվարություններ դիմակայող երկրներում ժողովրդավարական կայունության միջոցով լիարժեք դեմոկրատական սոցիալիզմ հաստատելը մնում է համերաշխության մեջ ապրող ազատ ու անկախ հասարակության տեսլականը:

Ահա, անցումային այս շրջաններն անցած կամ անցնող երկրներում վաղուց արդեն հաստա-

նացել է ժամանակը՝ տարածել խորքային արժեքների վրա հենված, ներկա մարտահրավերներին համապատասխանող, ժամանակակից սոցիալիզմի գաղափարները և համախմբել հասարակությանը դրանց շուրջ:

Դաշնակցության առաքելությունն էլ Հայաստանում, որպես սոցիալիստական կուսակցություն, հենց դրանից է բխում: Հայաստանի պայմանները հաշվի առնելով՝ տեղայնացնել սոցիալիստական արժեհամակարգից և միջազգային փորձից բխող լուծումներն ու մոտեցումները մեր երկրում: Լինելով հատկապես ազգային կուսակցություն, Դաշնակցությունը քաջ գիտակցում է, որ հենց ազգային խնդիրների լուծման համար անհրաժեշտ ներազգային համերաշխության և միասնության հիմքը ընկերային արդարությունն ու ազատությունն են: Ազգային, բայց ոչ ազգայնամոլ, որն ինքնին անարդարության և անհանդուրժողականության հիմքեր է ստեղծում:

Արդարությունն ու համերաշխությունն է սեփական ազգային ռեսուրսի կուտակման աղբյուրը և միաժամանակ նաև ներքին ու արտաքին վտանգներից խուսափելու լավագույն երաշխիքը: Եվ պատահական չէ, որ Հայաստանում առկա դժվարությունները հետևանք են հենց ընկերային արդարության և համերաշխության խախտման: Որովհետև Հայաստանում (ի դեպ, նաև ԱՊՀ երկրներում) ոչ միայն իսկապես սոցիալիստական իշխանություններ չեն եղել մեր վերանկախացումից ի վեր, այլ գնալով ավելի ու ավելի է փոքրամասնության ձեռքում կենտրոնանում տնտեսական և քաղաքական իշխանությունը: Այս պատճառով է հիմնականում հասարակության մեջ խորանում անարդարությունն ու սոցիալական բևեռացումը և սրվում ներազգային հակադրությունը: Այս հակադրությունը բազմաշերտ է, բայց արդեն ունի շատ վտանգավոր երկու դրսևորում:

Իրավական մակարդակում դա արտահայտվում է նրանով, որ կա մի կողմից սահմանադրությամբ դե յուրե ամրագրված մի կարգ, բայց գործում է չգրված օրենքներով և արատավոր հարաբերություններով հաստատված բոլորովին այլ կարգ: Իսկ հասարակական-քաղաքական մակարդակում, ընդհանրապես, արդեն գործ ունենք պետության երկատվածության հետ. երկրում կողք-կողքի գոյատևում են արտոնություններ ու պաշտպանություն տրամադրող «փոքրամասնության պետությունը» և անտերության ու ապօրինության դատապարտող «մեծամասնության պետությունը»: Սրանք արդեն դրսևորվում են ոչ միայն տնտեսության և քաղաքական իշխանությունների սերտաճման և կենտրոնացման երևույթով, այլև իշխանության և պետության նույնացումով, դեպի կուսակցության և պետության նույնացումը գոյացումով: Հետևաբար, սոցիալիստական գաղափարներից բխող պահանջները՝ ունենալ ազատ քաղաքացի և արդար համակարգ, աշխատանք և հավասար հնարավորություններ բոլորի համար, տնտեսական ազատ և արդար մրցակցություն, կադրերի անաչառ և ճիշտ ընտրություն, սրանք բոլորը ինքնանպատակ ցանկություններ չեն: Այս ամենը բխում է այն համոզումից, որ եթե չեն դրվում արդարության հիմքերը, ապա թագավորելու է անարդարությունը, և ինչպես ասվում է՝ «չես ցանում արդարության սերմեր՝ տարածվելու է անարդարության որոմը» և որպես արդյունք աճելու է անհանդուրժողականությունը և ալեկոծվելու է ներքաղաքական կյանքը:

Ահա այս պարզ ճշմարտություններն արհամարհելու պատճառով Հայաստանը կանգնած է այսօր տնտեսության կառավարման ճգնաժամին դեմ հանդիման, որի գլխավոր ախտանիշն այն է, որ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն աճում են անհամեմատ ավելի արագ, քան դրանք ստանում են իրենց լուծումները: Կառավարությունը ոչ միայն անպատրաստ գտնվեց

համաշխարհային ճգնաժամի առաջ, այլև չկարողացավ հակաճգնաժամային քիչ թե շատ համարժեք քայլեր կատարել: Իսկ եթե կառավարության վարած սոցիալ-տնտեսական ընդհանուր քաղաքականության գնահատման հիմքում դնենք բնակչության գնողունակության աստիճանը, ապա պատկերն ավելի հիասթափեցնող կդառնա:

Ստորև թվարկվող երևույթներից ամեն մեկն առանձնաբար արդեն կարող է նախանշան հանդիսանալ վերահաս սոցիալական պայթյունի:

Ահավասիկ.

- բնակչության առանց այդ էլ ցածր վճարունակությունը սանձազերծել է անանախադեպ գնաճ,
- ոչ միայն փորձ չի արվում աղքատության շեմը որևէ կերպ կապել կենսապահովման նվազագույն զամբյուղի հետ, այլև դա չկատարելով, փորձ է արվում թաքցնել աղքատության իրական մակարդակը երկրում,
- ոչ միայն չկա պայքար ազատ մրցակցությունը խեղդող մենաշնորհների դեմ, այլև այս կառավարության համար այդ պայքարը հնարավոր չէ, որովհետև եղած տնտեսությունը պայմանավորված է հենց մենաշնորհների գոյությամբ: Կառավարությունը չի կարող կտրել այն ճյուղը, որին նստած է,
- ոչ միայն աշխատանքի իրավունքը ապահովված չէ, այլև հենց աշխատողներն այսօր պաշտպանված չեն և գործազրկությունը անընդհատ աճ է արձանագրում,
- որպես գումարային արդյունք մարդկանց անապահովվածության և հեռանկարի բացակայության՝ ականատեսն ենք կրկին սաստկացող արտագաղթի:

Հայաստանի սոցիալ-տնտեսական այս վիճակը պարտադրում է ընկերվարական ուժերին, ինչպիսին Դաշնակցությունն է, հստակեցնել նաև սեփական առաջնահերթություններն ու անելիքները: Դրանք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին՝

- կատարել Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի լիարժեք ախտաճանաչում,
- ընկերվարական արժեհամակարգի հիման վրա առաջադրել սոցիալ-տընտեսական դժվարությունների հաղթահարման գործուն հայեցակարգ ու մեխանիզմներ,
- հասնել քաղաքական դաշտի ձախակողմյան հատվածի բյուրեղացմանը և քաղաքական պայքարի գաղափարականացմանը, որպեսզի իրենց գաղափարներով իշխանության հասած քաղաքական ուժերը առաջնորդվեն հենց այդ գաղափարներով,
- բնակչության սոցիալական իրավիճակի բարելավմանն ուղղված հասարակության համար ընկալելի և համոզիչ քայլեր առաջարկելու և ընտրապայքարի առողջացմանը հասնելու միջոցով, բարձրացնել անկաշկանդ և գիտակցված ընտրության մակարդակը՝ ազատելով ընտրողին ընտրակաշառքով կամ պարտադրանքով քվեարկելու սովորույթից:

Սոցիալիստական մտքի զարգացումները

Կարեն Խանլարյան

Պատմական ներածություն

Սոցիալիզմը արդարության գաղափարն է, որ քրիստոնեական բարոյագիտությունից սկիզբ առնող ակունքներ ունի եւ իր զարգացման երկար բնաշրջման մեջ դրկից գաղափարների հետ փոխներգործությունների բարդ ու կնճռոտ ճանապարհ է անցել:

Կապիտալիստական հասարակությունների ձեւավորմանը զուգահեռ, սոցիալիզմը դարձավ շահագործման եւ կապիտալի տիրապետության դեմ պայքարող հոսանքների քաղաքական գաղափարախոսություն: Սոցիալիստական մտքի նախահայրերը (Սեն-Սիմոն, Շարլ Ֆուրիե, Օուեն եւ այլն) ձգտում էին արտադրության գործընթացում եւ վերաբաշխման համակարգում հանրային դերի բարձրացման միջոցով հակակշռել կապիտալը եւ սահմանափակել շահագործումը:

1848 թ. «Կոմունիստական մանիֆեստը» սոցիալիստների համաշխարհային բանակում մեծ շարժ առաջացնելով հանդերձ, նաեւ ներքին սուր հակասությունների եւ պառակտումների նպաստավոր հող նախապատրաստեց:

Թեեւ ինքը՝ Կարլ Մարքսը, գաղափարախոսական այդ կարեւոր փաստաթղթում մեծ ճշգրտությամբ էր ուրվագծել սոցիալիզմի եւ կոմունիզմի էական տարբերությունները, սակայն բազմաթիվ

Սեն-Սիմոն

Շարլ Ֆուրիե

սոցիալիստական հոսանքներ, սկզբում, մեծ ոգեւորությամբ ընդունեցին «մանիֆեստ»-ը:

Այնուամենայնիվ սոցիալիզմի եւ կոմունիզմի միջեւ բաժանարար գծերը սկսեցին զգալի դառնալ 20-րդ դարասկզբից: Որոշ երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը եւ Հայաստանը, սոցիալիզմին ու կոմունիզմին հավատացող երկու գլխավոր հոսանքները, ի սկզբանե, համախմբվեցին առանձին կուսակցական կառույցներում: Ռուսաստանում Նարոդնայա վոլյան, ապա եւ Սոցիալիստ-ռեւոլյուցիոներ (Էս-Էռ) կուսակցությունը տարբերակվեցին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ բանվորական, ապա բոլշեւիկյան եւ մենշեւիկյան կուսակցություններից: Իսկ Հայաստանում հայկական սոցիալիստական կուսակցությունը՝ ՀՅ Դաշնակցությունը, ի թիվս այլ տարակարծությունների, գաղափարական հողի վրա եւս, տարբերակվեց Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունից եւ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի հայկական սեկցիաներից:

Սոցիալիզմի եւ կոմունիզմի պառակտումը գագաթնակետին հասավ Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ: Ավելի քան յոթ տասնամյակ վիթխարի քարոզչություն ծավալվեց խորհրդային համակարգը «սոցիալիստական» ներկայացնելու համար: Ոչ մարքսիստական սոցիալիզմը դասվեց բուրժուական կամ մանրբուրժուական գաղափարախոսությունների շարքում եւ այդ գաղափարի կրողները համարվեցին իմպերիալիզմի կառքին լծված գործակալներ:

Խորհրդային ազդեցության գոտուց դուրս շփոթները փարատվեցին Երկրորդ աշխարհամարտից եւ Հունգարիայի ու Պրահայի տխուր դեպքերից հետո: Սակայն խորհրդային բլոկի երկրներում, գաղափարախոսական տոտալ դիկտատուրայի պայմաններում, սոցիալիզմի մասին թյուր ընկալումները պահպանվեցին եւ շարունակում են գոյատեւել առ այսօր:

Շփոթը առկա է նաեւ Հայաստանում, ուր սոցիալիզմ եզրաբառը, հաճախ, ասոցիացվում է պետական կապիտալիզմի եւ սովետական «սոցիալիզմ»-ի հետ: Ահա այս պայմաններում հարկավոր է, փարատելով թյուր ըմբռնումները, պայքարել բուն սոցիալիստական արժեքների տարածման համար:

Մարքսիզմի ազդեցությունը

Մարքսիզմն անվիճելի ազդեցություն է ունեցել սոցիալիստական մտքի զարգացման մեջ, հատկապես տնտեսագիտության բնագավառում: Հավելյալ արժեքի տեսությունը, ինչպես նաեւ կապիտալի կենտրոնացման հետ կապված Մարքսի նախատեսությունները, անփոխարինելի հիմքեր տվեցին սո-



Ռոբերտ Օուեն

ցիալիստներին՝ վերլուծելու մարդ անհատի սոցիալ-տնտեսական շահագործումը եւ կապիտալի համաշխարհային տիրապետությունը:

Սակայն մարքսիզմի հասարակագիտական, պատմագիտական եւ փիլիսոփայական բազմաթիվ հիպոթետիկ դրույթները, հետագային վերածվելով անվիճելի դոգմաների, դանդաղեցրել են սոցիալիստական մտքի զարգացման տեմպերը եւ բթացրել ժամանակի ոգու հետ քայլ պահելու նրա էական ընդունակությունը:

Մարքսն իր դասական աշխատություններում քննադատել է տարբեր տիպի սոցիալիստական հոսանքներին՝ «դասակարգային պայքարի թեորիա»-ն չընդունելու կամ դրանից հրաժարվելու պատճառաբանությամբ: Սա ինքնին նշանակում է, որ սոցիալիստական դասական միտքը, մինչ այդ, արդարության հասկացությանն առընթեր, ավանդաբար հակված է եղել նաեւ համերաշխության գաղափարին: Դասակարգային պայքարի անհրաժեշտության վերաբերյալ մարքսիզմի բուռն պնդումները ստիպեցին սոցիալիստական բազմաթիվ կուսակցությունների՝ որդեգրել նշված տեսությունը եւ իրենց հայտարարել դասակարգային շահեր պաշտպանող կուսակցություն: Աստիճանաբար այս դոգման քննադատվել է սոցիալիստական մտքի, այդ թվում նաեւ ՀՅ Դաշնակցության կողմից: Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը դասակարգային պայքարի տեսությունից պաշտոնապես հրաժարվեց 1959 թ. գուդեսբերգյան իր ծրագրով, իսկ ՀՅ Դաշնակցությունը՝ 1978 թ. իր ծրագրով՝ ինքն իրեն հայտարարելով «Հայ ազգի բովանդակ շահերի պաշտպան»: Տրամաբանությունը պարզ եւ հստակ է. սոցիալիստական մոդելն առաջադրվում է հասարակական արդարությունն իրականացնելու համար եւ նախատեսված է հասարակության, ազգի բոլոր անդամների համար: Բնականաբար այդ մոդելը ունենում է իր կողմակիցներն ու հակառակորդները սոցիալական տարբեր շերտերում: Սակայն դրանից սոցիալիստական կուսակցությունը չի հայտնվում որեւէ դասակարգի պաշտպանության կամ մյուսին հակադրվելու կացության առաջ:

Մյուս դոգման մասնավոր սեփականության բացառման սկզբունքն է, որ առաջ է քաշվել սկզբում Պրուդոնի, ապա՝ Մարքսի կողմից, ով կոմունիստների պահանջը ձեւակերպել էր «Մանիֆեստ»-ում հետեւյալ պարզունակ բանաձեւով. «ոչնչացնել անհատական սեփականությունը»: Խորհրդային պետական կապիտալիզմի, հատկապես «ռազմական կոմունիզմ»-ի եւ «նոր տնտեսական քաղաքականության»՝ ՆԷՊ-ի կենսափորձը մարդկությանը եւ սոցիալիստական մտքին ապացուցեց, որ մասնավոր սեփականության բացառմամբ չի վերանում շահագործումը, այլ շարունակում է գոյատեւել պետական կենտրոնացած մեխանիզմներով: Այսպիսով՝ սոցիալիստական միտքը վերըստին որդեգրեց սեփականատիրության բազմաձեւության սկզբունքը եւ մշակեց դրա բարեկարգման մեթոդիկան:

Ազգայնացումը, պետականացումը կամ համայնացումը գործադրական պարտադիր սկզբունքներ չեն սոցիալիզմի համար: Եվրոպայի երկրներում սոցիալիստական իշխանությունների պրակտիկան մեզ ցույց է տալիս, որ սոցիալիստները մասնավոր սեփականությունը ազգայնացրել են երկու անհրաժեշտ դեպքերում. նախ՝ երբ տնտեսական որեւէ ճյուղում անկառավարելի մոնոպոլիաներ են ձեւավորվել, եւ ապա՝ երբ ռազմավարական նշանակությամբ արդյունաբերության որեւէ բնագավառում, մասնավոր սեկտորի ապաշնորհ տնօրինումների կամ վարչարարության պատճառով, ոչնչացման եզրին է կանգնել տվյալ բնագավառը:



Կարլ Մարքս

Սույն պրակտիկան մեզ հուշում է նաեւ, որ սոցիալիստների միջոցով կատարված ազգայնացման մեխանիզմը, այսինքն՝ օրենքի ուժով, աստիճանական փոխհատուցումը, էապես, տարբեր է բոլշեւիկյան բռնագրավումից, էքսպրոպրիացիայից:

Մարքսիզմն իր դետերմինիստական փիլիսոփայությամբ ֆատալիզմի բացորոշ տարրեր հաղորդեց սոցիալիստական շարժմանը: Սոցիալիզմի ինտեգրալ համակարգային մոդելը սահմանափակվեց հասարակական պարզ ֆորմացիայով, որը պետք է պատմական անխուսափելի ճակատագիր դառնար եւ վերջակետ դներ կապիտալիզմի դարաշրջանին: Այս կարգի ֆատալիզմի արգասիքներից էին մարդու ազատ կամքի, մշակութային եւ հոգեմտավոր գործոնների թերարժեւորումները:

Ֆաբիանականության ազդեցությունը

Ֆաբիանական ընկերությունը հիմնադրվել է 1884 թ. Բրիտանիայում: Ընկերության հիմնադիրների համար առանցքային նշանակություն է ունեցել հռոմեացի զորավար Ֆաբիան Մաքսիմուսի այն միտքը, համաձայն որի «պետք է սպասել եւ հարվածել հարմար պահին»: Նրանք կապիտալիզմի դեմ պայքարում փորձել են կիրառել ռազմավարական այս սկզբունքը: Հետեւաբար նրանք սոցիալիզմի իրականացումը տեսնում էին շարունակական ռեֆորմների ճանապարհով, որոնք պետք է հարմար պահերին առաջարկվեին ու սահմանադրական օրենքի տեսքով ամրագրվեին երկրում: Սոցիալիզմի իրականացման հաջորդականության, աստիճանականության ֆաբիանական տեսությունը որդեգրվեց բազմաթիվ սոցիալիստական կուսակցությունների կողմից:

Ֆաբիանական մտածողության մյուս ձեռքբերումը սոցիալիստական արժեքների ճակատը փիլիսոփայական եւ վարդապետական խարազանումներից հեռու պահելու ավանդույթն է: Սիդնեյ Վեբը, Ջորջ Բերնարդ Շոուն եւ ֆաբիանիստական դպրոցի մյուս տեսաբանները տրամաբանեցին, որ սոցիալիզմին մատերիալիստական, իդեալիստական կամ աթեիստական պիտակներ փակցնելը աղավաղում է սոցիալիստական արժեքների եւ արդարության գաղափարի դիմագիծը եւ դժվարացնում դրանց իրականացումը: Նման եզրակացության է հանգել նաեւ ՀՅ Դաշնակցությունը: Հայկական սոցիալիստական միտքը, որ կրելով որոշ ազդեցություններ օրվա փիլիսոփայական դպրոցներից՝ պատմական մատերիալիզմից եւ սինթետիկական մոնիզմից, այնուամենայնիվ իր պաշտոնական գաղափարախոսությունը չի կապել դրանցից եւ ոչ մեկի անվան հետ:

Ֆաբիանիստները նաեւ տեսական լուրջ ներդրում են կատարել սոցիալիզմ հասկացությունն ապադասակարգայնացնելու ուղղությամբ: Նրանք համոզված էին, որ հնարավոր չէ Բրիտանիայում սոցիալիստական արժեքներ իրականացնել առանց միջին դասակարգերի հետ համագործակցության: Հետեւաբար նրանք, լեյբորիստական կուսակցության քաղաքական գործունեությանն առընթեր, ուշագրավ քայլեր են ձեռնարկել՝ քարոզելու իրենց գաղափարները միջին եւ ունեւոր դասերի շրջանակներում: Այս ուղղությամբ ֆաբիանիստները խնամքով մշակել եւ հրապարակել են սոցիալ-տնտեսական եւ քաղաքացիական հարցերին առնչվող իրենց դետալային մոտեցումներն ու գործնական լուծումները:

Ֆաբիանականությունը սոցիալիստական մըտքին տվել է կիրառական բազում մեթոդներ եւ սո-


Ջորջ Բերնարդ Շոու

Սիդնեյ Վեբ

ցիալիստական կուսակցությունների համար պատրաստել քաղաքական եւ հասարակական շարժման ամուր ենթահող:

Դասական լիբերալիզմի ազդեցությունը

Դասական լիբերալիզմը եւ սոցիալիզմը պատմականորեն դրկից գաղափարախոսություններ են եղել եւ, ինքնուրույնաբար պահպանելով սեփական տեսակն ու բնույթը, փոխհարստացրել են միմյանց: Այս իրողության լույսի տակ անհրաժեշտ է հստակորեն տարբերակել դասական լիբերալիզմը ժամանակակից նեոլիբերալիստական գաղափարախոսությունից:

Սոցիալիզմի եւ դասական լիբերալիզմի ընդհանրական մի քանի էատարրերից նշմարելի է ինդիվիդուալիզմի հարցը: Սոցիալիզմը, ի տարբերություն մարքսիզմի, չի հերքել անհատի դերը պատմահասարակական գործընթացներում: Հետեւաբար անհատական ազատությունների հարցը էական արժեք է համարվել նրա համար:

20-րդ դարասկզբին լիբերալական միտքը մեջտեղ հանեց «ազատ շուկա»-ի մոդելը, որը քննադատության ենթարկվեց սոցիալիստական մտքի կողմից: Սոցիալիստները հատկապես չէին ընդունում «ազատ շուկա»-ի ինքնակարգավորման լիբերալական սկզբունքը եւ գտնում էին, որ պետության դերի նվազեցման պայմաններում «ազատ շուկա»-ն հանգեցնելու է մոնոպոլիզացիայի առաջացման: Հետեւաբար սոցիալիստական միտքն անհրաժեշտ է համարել իրատեսական օրենքների մշակմամբ եւ դրանց իրավական մեխանիզմների ճշտորոշմամբ կանխել «ազատ շուկա»-ի սանձարձակությունները ու բացասական դերը սոցիալ-տնտեսական տիրույթում:

Երկրորդ աշխարհամարտից հետո, չափավոր լիբերալ Էրհարդի առաջադրած «սոցիալական» շուկայի մոդելն ընկալվեց սոցիալիստական մտքի կողմից եւ հետագայում, լուրջ վերանայումներից ու մշակումներից հետո, դարձավ սոցիալիստական մի շարք կուսակցությունների նվազագույն պահանջներից մեկը:

Սոցիալիստական մտքի եւ դասական լիբերալիզմի համատեղ ձեռքբերումներից է նաեւ «համընդհանուր բարօրության պետություն» մոդելը: Սակայն պետք է շեշտել, որ, ի տարբերություն դասական լիբերալական մտածողության, սոցիալիստական միտքը «սոցիալական շուկա» կամ «բարօրության պետություն» մոդելներն ընկալել է ոչ թե որպես վերջնանպատակ, այլ անցումային շրջանի գործընթացներ՝ հասարակությանը դեպի սոցիալական առավելագույն արդարություն առաջնորդելու համար:

Դեմոկրատիզմի ազդեցությունը

Սոցիալիզմն իր դրկից գաղափարներից ամենախոշոր եւ ամենավաղեմի ազդեցությունները կրել է դեմոկրատիզմից: Լիբերալական մտածողությունը դեմոկրատիան համարում է լոկ վարչաքաղաքական կատեգորիա, մինչդեռ սոցիալիստական միտքը, արժեւորելով դեմոկրատիայի արդյունավետությունը, մշտապես ձգտել եւ ձգտում է կա-

Լյուդվիգ Էրհարդ

ռավարման այդ համակարգը կիրառել նաեւ տընտեսության մեջ՝ իրականացնելով սոցիալ-դեմոկրատիա: Ի թիվս մյուս սոցիալիստական հոսանքների, ՀՅ Դաշնակցությունն էլ հավատում է, որ սոցիալիզմն անիրականանալի է առանց դեմոկրատիայի, իսկ դեմոկրատիան թերի է եւ սահմանափակ՝ առանց սոցիալիզմի: Հատկանշական է, որ դեմոկրատիայի ներկայացուցչական կարգին առընթեր՝ Դաշնակցությունն ընդունում է նաեւ դեմոկրատիայի հաստատութենական տեսակը, եւ իր ծրագրով առաջադրում է «քաղաքացիական հասարակության» կարգավիճակի կիրարկումը հասարակական-քաղաքական ասպարեզում՝ որպես դեմոկրատիայի սոցիալական արդյունավետությունը բարձրացնող մեխանիզմ եւ դրա գոյության երաշխիք:

Վերջաբան

Հարկ ենք համարում նշել, որ սոցիալիստական միտքն իր զարգացման հունի մեջ, մշտապես փարվելով համամարդկային վսեմ արժեքներին, մեծ ունակություն է դրսեւորել դրկից գաղափարների դիֆուզիայի սկզբունքի նկատմամբ: Իր այդ ունակության պատճառով եւ կրելով որոշակի ազդեցություններ քրիստոնեական ուսմունքից, դեմոկրատիզմից, դասական լիբերալիզմից եւ մարքսիզմից, սոցիալիստական միտքը վերածվել է գաղափարախոսական ինքնատիպ եւ տոկուն համակարգի եւ հաջողությամբ դիմակայել տարաբնույթ ժամանակահատվածներում ի հայտ եկած ապագաղափարականացման քայքայիչ ալիքներին:

Խորհրդային Միության փլուզումից հետո, «գաղափարախոսությունների մահվան գույժը» վերընտին հնչեցնելով, նեոլիբերալիզմը աշխարհով մեկ գաղափարախոսական կատաղի արշավ սանձազերծեց սոցիալիզմի դեմ, ինչի արդյունքում գաղափարախոսական ժամանակավոր նահանջ ապրեց սոցիալիստական միտքը, որը, մինչ այդ, տարիներ շարունակ մերժելով եւ արեւմտյան դասական կապիտալիզմը, եւ խորհրդային տոտալիտարիզմը, ձգտում էր իրականացնել ու կատարելագործել սոցիալական արդարության սեփական մոդելը:

Նեոլիբերալիզմի հաղթարշավի սկզբնական տարիներին՝ 1990-ականներին, հասարակական բնագավառում «համընդհանուր բարօրության պետություն» հասկացությանը դեմ դրվեց «նվազագույն պետություն» հասկացությունը, տնտեսության բնագավառում «սոցիալական շուկա» մոդելին կրկին դեմ դրվեց «ազատ շուկա» մոդելը, իսկ քաղաքական բնագավառում սոցիալ-դեմոկրատիայի գաղափարին դեմ դրվեց լիբերալ-դեմոկրատիայի գաղափարը:

Եթե կոմունիզմը, ազեթ տեսականորեն, ձգտում էր հավասարության եւ ջնջում ազատության սկզբունքը, եւ եթե նեոլիբերալական հոսանքը ձգտում է հասնել անհատական ազատության ծայրահեղացված դրության՝ տեսականորեն մերժելով կոլեկտիվիզմը եւ գործակցության սկզբունքը, ապա սոցիալիստական միտքը, որդեգրելով գործակցության ու մրցակցության երկու սկզբունքները, ձգտում է եւ՛ օպտիմալացված հավասարության, եւ՛ օպտիմալացված ազատության պայմաններում՝ առավելագույն արդարության:

Ոմանք, թյուրիմացաբար, կարծում են, թե ժամանակակից սոցիալիստական միտքը աստիճանաբար շեղվում է իր պատմական հունից:

Սակայն համոզված ենք, որ սոցիալիզմը ոչ թե շեղվում է, այլ վերազինվում ու վերանորոգվում է իր բուն արժեքներով:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(մեղադրական եզրակացությունը)

Հայոց ցեղասպանության փաստի հանդեպ Թուրքիայի պաշտոնական պատմագրության որդեգրած համառ ժխտողականության պայմաններում շարունակում է արդիական մնալ ցեղասպանության փաստագրումը՝ հատկապես օսմանյան վավերագրերի միջոցով: Օսմանյան փաստաթղթերի մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում 1919-1920 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում իրականացված մի շարք դատական գործերը, որոնք վերաբերում էին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայոց ցեղասպանության կազմակերպիչ թուրքական կառավարության անդամներին, երիտթուրքական կուսակցության պարագլուխներին, ինչպես նաև՝ Օսմանյան կայսրության տարբեր շրջանների ղեկավարներին:

Օսմանյան կայսրության տարբեր նահանգներում և գավառներում կազմակերպված հայոց կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերից մեկը վերաբերում էր Տրապիզոնի նահանգին: Տրապիզոնի դատավարությունը իրականացվել է Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանում 1919թ. մարտի 26-ից մայիսի 20-ը (20 նիստ): Գործի հետաքննությունն սկսվել է Մուդրոսի զինադադարի կնքումից հետո, երբ որոշվեց դատական պատասխանատվության ենթարկել Հայոց ցեղասպանության հեղինակներին, կազմակերպիչներին և գործադրողներին: Հետաքննիչ հանձնախմբի կողմից Տրապիզոնում և Ստամբուլում կատարված հե-

տաքննության արդյունքում 1919 թ. հունվարին սկսել են ձերբակալվել վերոհիշյալ նահանգում իրականացված հայոց կոտորածների պատասխանատուները: Դրանց շարքերում էին Տրապիզոնի նախկին հարկային տեսուչ Մեհմեդ Ալին, առևտրական և գաղտնի գործակալ Մուստաֆան և հյուրանոցատեր Նիազին: Այս անձինք արգելափակվեցին Բեքիրաղա բյոլուղու կոչվող բանտում: Ձերբակալությունները շարունակվեցին նաև հետագա ամիսներին: Հաղորդվեց, որ Իզմիրում (Զմյուռնիա) ձերբակալվել է նաև Տրապիզոնի առողջապահական մասնաճյուղի տնօրեն Ալի Սայիբը: Միաժամանակ, քանի որ Տրապիզոնի հայ բնակչության կոտորածի գլխավոր պատասխանատուն՝ Տրապիզոնի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմին, ճողոպրել էր Գերմանիա և գտնվում էր փախուստի մեջ, 1919 թ. մարտի 3-ին հրապարակված որոշման համաձայն՝ հայտարարվեց, որ նրան 3 օր է տրվում՝ դատարանին հանձնվելու համար, հակառակ դեպքում դատվելու է հեռակա կարգով, իսկ գույքը բռնագրավվելու է: Թեև Տրապիզոնի հայերի կոտորածների գործի հետաքննությունն ավարտվեց 1919 թ. փետրվարի 27-ին, դատաքննությունն սկսվեց մեկ ամիս հետո՝ մարտի 26-ին:

Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում լսված վկաների ցուցմունքների շնորհիվ լիովին հաստատվեց, որ այստեղ տեղի ունեցած ջարդերը, թունավորումները, ջրախեղդ անելու գործողություններն ուղղորդվել են Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի կողմից, որն իր հերթին հրահանգներ էր ստացել կենտրոնական կառավարությունից:

Թուրքական ռազմական արտակարգ ատյանը 1919թ. մայիսի 22-ին կայացրած դատավճռով Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիին և կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբահչելի Նայիլին հեռակա կարգով դատապարտել է մահվան, Մեհմեդ Ալիին՝ 10, իսկ Մուստաֆային ու Նուրիին՝ 1 տարվա ազատազրկման:

Ստորև օսմաներենից թարգմանաբար ներկայացնում ենք արաբատառ թուրքերենով տպագրվող օսմանյան «Ալեմդար» օրաթերթում հրապարակված Տրապիզոնի դատական գործի մեղադրական ակտը, որը կազմվել է դատախազ Ֆերիդունի կողմից և լսվել 1919 թ. մայիսի 16-ին: Պետք է նշել, որ հայոց կոտորածների զանգվածային ու կանխամտածված բնույթը մեկ անգամ ևս ապացուցող սույն փաստաթուղթը հրապարակվում է առաջին անգամ:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՄԲԱՍՏԱՆԱԳՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Երեկ Ռազմական արտակարգ ատյանը դատարանի նախագահ Մուստաֆա փաշայի նախագահությամբ նիստ հրավիրեց և շարունակեց Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների մասնակցության մեջ մեղադրվողների դատաքննությունը: Ընթերցվեց դատախազի կողմից կազմված ներքոհիշյալ ամբաստանագիրը.

«Տրապիզոնի վիլայեթում Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կառավարության կողմից հայերի տեղահանության վերաբերյալ ընդունված որոշումների գործադրման ընթացքում նախ՝ հայ տղամարդկանց և ապա՝ կանանց ու երեխաներին նշանակված վայրեր տեղափոխելիս նրանց մի մասն անգթաբար սպանվել է Դեյիրմենդերեի կողմերում, մյուս կանայք ու երեխաներն էլ բեռնվել են նավակները և ջրախեղդ արվել բաց ծովում: Հայերի մի մասին էլ, իբր բուժման նպատակով, թունավորել են տարբեր միջոցներով «Կարմիր մահիկ» հիվանդանոցում, որից հետո կողոպտվել է նրանց գույքը, դրամը և թանկարժեք իրերը: Ողջ մարդկության կողմից անեծքով ու նողկանքով հիշվելու արժանի նման անամոթ արարքների ու հանցագործությունների հանդգնած և այժմ փախուստի մեջ գտնվող Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի և կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբահչելի Նայիլի, ինչպես նաև դատարանում ներկա գտնվող Մեհմեդ Ալիի, Մուստաֆայի, Նիազիի, Նուրիի և մյուս հանցակիցների մասնակցությունն այդ վիթխարի կոտորածին

հիմք են տալիս պատիժ սահմանելու համար: Նրանց գործի հետաքննությունը, նախ և առաջ, բխում է օրենքի անհրաժեշտությունից: Եվ ի վերջո՝ ովքե՞ր են Ազմին ու Նայիլը: Սրանք ոչ թե պետական կամ վարչական պաշտոնյաներ են, այլ՝ ինը տարի առաջ պետության ղեկը պատահաբար ձեռք գցած, առանձին կամ միասին կատարված բռնությունների, կոտորածների, անօրինականությունների, անհատնում չարաշահումների արդյունքում սուլթանական կառավարությանն այսօրվա ողբալի վիճակին հասցրած կործանիչ ձեռքերից ու վայրենի ուղեղներից բաղկացած «Միություն և առաջադիմություն» կոչեցյալ ավազակախմբի հանցագործ ներկայացուցիչներն են Տրապիզոնում:

Մեղադրող կողմը վերոնշյալով ներկայացրեց Ջեմալ Ազմիին ու Յենիբահչելի Նայիլին վերաբերող իր տեսակետն ու մեկնաբանությունը: Այսինքն՝ վերոհիշյալ երկուսը գլխավոր հանցագործներն են, գործող անձինք: Բնականաբար, միայն Ջեմալ Ազմին ու Նայիլը չէին կարող այդ ահռելի սպանդն իրականացնել: Վերոհիշյալ ավազակախմբի ոճրային մտահղացումները կյանքի կոչելու համար բազմաթիվ գործիքների կարիք էր զգացվում: Գաղափարը և կիրառվող մեթոդն էլ այն էր, որ որպես գործիք ընտրվեն պրիմիտիվ, սահմանափակ, արագ ազդեցության տակ ընկնող, սեփական ջանքերով առաջընթաց գրանցելու անկարող մարդիկ: Անկասկած է, որ քիչ թե շատ զարգացած մեկը չէր կարող ողջ մարդկությանը հուզած այդ ոճիրների մասնակիցը դառնալ: Այդ իսկ պատճառով կատարված հետաքննության և դատավարության ընթացքում հարցաքննված վկաների, ինչպես նաև բազմաթիվ այլ անձանց տված հավաստի տեղեկություններից ու Վեհիբ փաշայի փաստաթղթերի մեջ պահպանված զեկուցումներից արված մեր եզրակացության համաձայն, քանի որ Ջեմալ Ազմին ու պատասխանատու քարտուղար Յենիբահչելի Նայիլը տվյալ դեպքերին մասնակցել են միասին, նրանք պետք է պատժվեն ըստ 45-րդ և 170-րդ հոդվածների: Քանի որ Նիազի, Մուստաֆա, Նուրի, Մեհմեդ Ալի և բժիշկ Ալի Սայիբ բեյերը տվյալ հանցագործություններին մասնակցություն են ունեցել մասնակի կերպով, ապա նրանք պետք է պատժվեն 45-րդ հոդվածի երկրորդ պարբերության մատնանշմամբ՝ 174-րդ հոդվածի համաձայն: Ինչ վերաբերում է Սայիբ բեյին, ապա նա որպես բժիշկ հիվանդին թունավորելու անհրաժեշտությունը չուներ. կարող էր հիվանդներին սպանել՝ դեղերի չափաբաժինը մեծացնելով կամ սխալ բուժելով: Դա անընդունելի է բանականության, տրամաբանության և օրենքի կողմից: Եթե անգամ նրանց մարմինները թաղվել են կրոնական արարողությամբ, պետք է դիակները հանել և տեղում դիազննություն կատարելով՝ պարզել, թե որ թույնն է նրանց մահվան պատճառը դարձել, որից հետո, եթե այդ հանցագործությունը հաստատվի, բժիշկ Ալի Սայիբը կարող է լինել տվյալ հանցագործության կատարողը: Քանի որ այսօր նման հնարավորություն չունենք, պահանջում եմ, որպեսզի վերոնշյալն այդ հարցում արդարացվի և միայն պատժվի երեխաներին մեծ կողովներով տեղափոխողների հանցագործ գործողություններին աջակից լինելու համար: Պահանջում եմ, որ Ալի Սայիբը մյուս հանցագործների հետ միասին պատժվի քրեական օրենսգրքի՝ տվյալ ոճիրներին վերաբերող 45-րդ հոդվածի երկրորդ պարբերության մատնանշմամբ՝ 174-րդ հոդվածի համաձայն: Քանի որ կայմակամ (գավառապետ) Թալաաթ բեյի՝ տեղահանությանն ու կոտորածներին, ինչպես նաև՝ Ռազմական հարկերի հանձնաժողովներում տեղի ունեցած չարաշահումներին մասնակցություն ունենալու վերաբերյալ դույզն-ինչ ապացույց և հաստատող վկա անգամ չի գտնվել, պահանջում եմ, որ վերոհիշյալն արդարացվի»:

Ամբաստանագրի ընթերցումից հետո դատարանի նախագահի կողմից հաղորդվեց, որ դատն ընդմիջվում է մինչև շաբաթ օրը՝ ժամը ինն անց կես, որպեսզի լսվեն դատաքաջտաններ ի ցաջտանական ճառերը, և նիստն ավարտվեց:

«Ալեմդար» օրաթերթ,
17-ը մայիսի, 1919 թ.

ՍԹԱՓՎԵՆՔ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵՆՔ՝ 2015 ԹՎԱԿԱՆԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է

ՀԱՄԼԵՏ ԴԱՎԹՅԱՆ

Այս տարի նշում ենք Հայոց ցեղասպանության 95-րդ տարին: Նորից նշում ենք ազգովին, հնարավորինս միաբան և ի լուր աշխարհի: 65 թվականից այսպես ենք ապրում՝ օգտվում ենք նշելու տրված հնարավորությունից ու դրանից այն կողմ չենք կարողանում անցնել, ավելին չենք կարողանում ձեռք բերել: Իսկ որն է այդ «ավելին», որին չենք կարողանում հասնել կամ, որ առավել ընդունելի է մեզ համար, չեն թողնում հասնենք: Մեր ուզածի սահմանումը կարծես թե ունենք՝ «Արդար հատուցում»: Դրանից անդին, այսինքն՝ հատուցման (այն էլ արդար) մանրամասները չունենք: Եվ նման մոտավոր ցանկությամբ ու իներցիոն ընթացքով գնում ենք դեպի 100-րդ տարելից: Ավելի ճիշտ՝ տարելիցն է գալիս դեպի մեզ: Ի՞նչ ենք անելու, երբ հանդիպենք: Կարծես թե հարցին մոտենում ենք հայավարի, այսինքն՝ օրը կգա, կտեսնենք: Սակայն եթե իսկապես այսպես դիմավորենք 2015-ը, ապա աշխարհին ցույց կտանք մեր անկազմակերպվածությունը, հավաքական միտք ունենալու անկարողությունը, աննպատակասլացությունը, ողբասիրությունը և մեր մնացած վատ կողմերը, աշխարհի աչքին կսպառենք հարգանքի այն փոքրիկ պաշարը, որն այսօր դեռևս ունենք, և վերջնականապես կդասվենք խեղճ ու անկարող ժողովուրդների շարքին: Վերջ հայոց խոկումներին: Անշուշտ, սա չէ մեր ցանկությունն ու երազանքը: Մեր երազանքը, ի վերջո, առողջ և լիարժեք կյանքով ապրող ազգ դառնալն է: Այսօր պարզապես պետք է գիտակցենք, որ այդպիսին լինելը շատ բանով պայմանավորված է 2015 թվականով: Նրանով, թե ինչ ազգային ծրագիր կներկայացնենք աշխարհին, ինչ տոնով կխոսենք թուրքի հետ և ինչ առաջարկներ կանենք հարևաններին: Ընդ որում հարկ է նկատի ունենալ, որ Հայկական հարցը միայն հայերին չի վերաբերում, և, իսկապես, շատ-շատերն են ուշադիր հետևում, թե ինչ պիտի անենք մենք, ինչ պիտի լինի մեզ հետ: Արդ, ուրեմն, այսօր արդեն մտածենք ու նախապատրաստվենք ճակատագրական ու բեկումնային 2015 թվականի համար:

Գրեթե կասկած չունեմ, որ հանրապետության ղեկավարությունը, պատկան մարմիններն ու քաղաքական ուժերը մտածում են այս ուղղությամբ, և ուրախ կլինեմ, եթե պարզվի, որ իմ բոլոր մտահոգություններն անտեղի են, քանի որ նրանց կողմից արդեն համակարգված մոտեցումներ կան խնդրին: Սակայն ինքնահարգանքից դրդված ու ինքնապաշտպանական բնազդի թելադրանքով, գործին ինչ-որ չափով մասնակցելու համար, այնուամենայնիվ, համարձակվում եմ ներկայացնել իմ առաջարկությունները «ինչ անելու» վերաբերյալ:

Առաջին հերթին, կարծում եմ, անհրաժեշտ է խմբավորել բոլոր այն հարցերը, որոնք առնչվում են Հայոց ցեղասպանությանը և հուզում են մեզ, թուրքերին, միջազգային հանրությանը: Տարօրինակ է,

բայց փաստ, որ իսկապես Եղեռնին վերաբերող բազմաթիվ հարցեր կան, որոնք դեռ ինքներս մեզ համար պիտի պարզենք: Ըստ այդմ, մենք պետք է կարողանանք ա) այլևս հիմնական չհամարել ողբերգության ծավալներն ու ցավի ահագնությունն ընդգրկելու փորձերը, բ) հուզականից անցնել տրամաբանական և գործնական մոտեցումների, գ) բավարարվել եղելության փաստը ամեն հայի գիտակցությանը հասցնելով, և կոտորածների ու անմարդկային խոշտանգումների մանրամասները չպարտադրել դեռահասությանն ու երիտասարդությանը, դ) փոխարենը իբրև պայքարի միջոց և քարոզչական պատերազմի բաղադրյալ՝ այդ մանրամասներն ու պատկերները հնարավորինս գրագետ և լայնորեն ներկայացնել օտար լսարաններին, ե) ընդհանրացումներ կատարել եղած փաստական նյութերի հիման վրա, զ) կատարվածին ճիշտ գնահատականներ տալ:

Առաջնահերթային է թուրքերի հետ հարցը քննելիս մեր կողմից հարուցված մեղադրանքների ճշգրիտ ձևակերպումը, և նրանց հակադարձումներին պատրաստ լինելը: Օրինակ՝ զրկել նրանց իրենց, թերևս, ամենագլխավոր փաստարկից, իբր՝ հայերի մեղքը հակաթուրքական գործողություն կատարելու մեջ է: Այնուհետև, թույլ չտալով նրանց այդ անհեթեթությունը շահարկել, ուշադրությունը կենտրոնացնել կատարվածի բովանդակության վրա: Իսկ կատարվածը պետական հանցագործություն էր: Ոչ ոք և ոչ մի իշխանություն ժողովուրդ դատելու, առավել ևս՝ նրան մահվան դատապարտելու իրավունք չունի: Նման իրավունք ոչ Աստծո կողմից է տրված, ոչ բնության: Թուրքը դա զանց է առել:

Հաջորդը մեր միասնականությունն է բոլոր հարցերում: Առայժմ մենք համահայկական ընդհանուր դիրքորոշում չունենք, չենք կարող ասել նաև, թե ով պետք է հանդես գա հայ ժողովրդի անունից, ում վրա պետք է դրվի հայոց ազգի համաձայնեցված դիրքորոշումը ներկայացնելու առաքելությունը և ինչպիսին պետք է լինի բազմամիլիոնանոց Սփյուռքի դերը: Ասվածը նորություն չէ, բայց կրկնում եմ, քանզի որևէ տեղաշարժ չկա այդ ուղղությամբ: Որքան էլ տարօրինակ է՝ հայ-թուրքական հարաբերությունների առումով մեր նպատակներն ու մտադրությունները դեռևս անորոշ են: Հաճախ իրարից չենք տարբերում, շփոթում ենք խնդիրն ու տեխնոլոգիան, նպատակն ու միջոցը: Տվյալ դեպքում եթե նպատակը պարզ է՝ արդար հատուցում, ապա հստակ չեն դետալներն ու գործողությունները:

Ինչ պետք է գիտենանք թուրքերի մասին: Նախ պիտի փոխենք մեր պատկերացումները թուրքի մասին: Պիտի հաղթահարենք ինքներս մեզ, և թուրքին այլևս չթերագնահատենք ու միայն նրա գազանային բնույթը մատնացույց անենք: Մեր խնդիրն է ծանոթանալ թուրքի հոգեբանությանը, ճշգրիտ պատկերացում ունենալ նրա մտածողության մասին: Եվ ամենաառաջին հերթին, հասկանալ, թե թուրքն ինչու չի ընդունում, որ ինքը հաղթել է պայքարի ելած հայությանը: Ի՞նչն է խանգարում նրան կամ ինչից է վախենում: Պարզվում է, որ նա իսկապես վախենալու բան ունի: Թուրքիան որպես պետություն, և թուրքերը որպես ժողովուրդ, հանցագործություն են կատարել հայ ժողովրդի հանդեպ՝ խախտելով կրոնական, բարոյական, մինչև անգամ պատերազմական գրված ու չգրված օրենքները: Ցեղասպանություն իրագործելը նույնիսկ ջիհադի օրենքների խախտում է: Ջիհադ է հայտարարվում հակառակորդին հաղթելու, ոչ թե ժողովուրդ ոչնչացնելու համար: Բարոյական ու մարդկային չէ կանանց, երեխաների ու ծերերի տանջամահ անելը: Պատերազմներն ավարտվում են բանակների, ոչ թե ժողովուրդների կործանումով:

Թուրք ժողովուրդը վախենում է կորցնել իր անսխալական լինելու պատկերացումը, Թուրքիա պետությունը վախենում է վտանգել իր պետական գաղափարախոսությունը: Բանն այն է, որ Մուստաֆա Քեմալը ոչ միայն երիտթուրքերի կուսակցության մեջ է եղել, այլև նրա ստեղծած քեմալական գաղափարախոսությունն ամբողջովին խարսխված է երիտթուրքիզմի սկզբունքների վրա: Թուրքը վատ է զգում հանցագործություն կատարած ժողովուրդ ճանաչվելու հեռանկարից, սակայն դա ոչ մի կապ չունի հանցագործության փաստի հետ: Իր խնդիրն է, թե ինքն ինչպես դուրս կգա

այդ վիճակից: Օսմանյան Թուրքիան ընդունել էր իր գործած հանցանքը և ճանաչել իր պատասխանատվությունը, ի հաստատումն դրա՝ ստորագրելով Սևրի խաղաղության պայմանագիրը: Միջազգային հանրությունը նույնպես հաստատել է հանցագործության կատարված փաստը՝ ի դեմս Փարիզի խաղաղության վեհաժողովի: Այսպիսով, այն, ինչ այսօր անվանում ենք ճանաչում, իրականում ճանաչման վերահաստատում է, որովհետև Թուրքիայի Հանրապետությունը Օսմանյան կայսրության քաղաքական ժառանգորդն է: Անհեթեթ է, երբ մնացած բոլոր առումներով ժամանակակից Թուրքիան իրեն Օսմանյան Թուրքիայի հետնորդն է համարում, բայց հայությանը վերաբերող խնդիրներում՝ ոչ: Սա, իհարկե, լուրջ չէ և նման ձևով չի կարող վերացնել թուրքերի ու Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվությունը հայերին ցեղասպանության ենթարկելու համար: Առավել ևս, որ նա առ այսօր օգտվում է այդ հանցագործության բերած հսկայական նյութական և այլ կարգի հարստություններից:

Մի կարևոր հանգամանք էլ կա, որը մեզ շատ կվնասի, եթե անտեսենք. խոսքը կեղծ նպատակների մասին է: Դրանք բազմաթիվ են ու ամբողջովին զբաղեցնում են մեր միտքը: Թուրքը մեզ շատ լավ ճանաչելով, գիտե, որ մենք ընթացիկ հարցերով տարվող ենք ու միշտ ստեղծում է հարցեր, որոնց վրա ընկնելով՝ թողնում ենք հիմնականը: Դրանցից են հայ-թուրքական սահմանի բացումը, Թուրքիայի ընդունումը Եվրամիություն և այլն: Ինքներս էլ ենք այդպիսիք ստեղծում, օրինակ՝ Արևմուտքում հնարավորինս շատացնել մեզ համակրողների թիվը, թուրք հանրությանը տեղեկացնել կատարվածը և փոխել նրա կարծիքը խնդրո վերաբերյալ և այլն: Վկայություններ կան (Սեպուհ եպիսկ. Չուլջյան, «Ազգ», 12. 09. 09), որ, հակառակ Ցեղասպանությունը ժխտող թուրքական պաշտոնական քարոզչության, թուրք մարդը քաջատեղյակ է իր պատմությանը և հայերի ճակատագրին: Ուրեմն՝ նրանց համար էլ կարելի է ընդունելի դարձնել «Անցյալ, որը չի կարող անցյալ մնալ» սկզբունքը: Հայերի և թուրքերի միջև արդի երկխոսությունը պետք է բխի ազգերի և պետությունների շահերից ու անհրաժեշտություններից, իսկ հասարակությունները հետո կընդունեն փաստը կամ կհամակերպվեն դրան: Հասարակության դերակատարությունն այս հարցում շահարկողները բոլորովին ուրիշ նպատակ են հետապնդում:

Ինչպես կարող ենք հասնել նրան, որ թուրքերը և Թուրքիան պատասխանատվություն կրեն: Ցարդ մեր բռնած ճանապարհները արդարության ոչ մի հանգրվանի մեզ չեն հասցրել: 2015 թվականը մեզ համար կարող է կամ պատմական շանս դառնալ, կամ պայծառ ապագայի դուռը մեր առջև վերջնականապես փակել: Հիրավի, ճակատագրական պահը գիսաստղի պես մեզ է մոտենում: Կարծում եմ, սովորության համաձայն, չարժե սպասել, թե թուրքն ինչ կասի, որպեսզի մենք մերժենք կամ ընդունենք: Շահելու նպատակով այս անգամ նախաձեռնողականություն մենք պիտի հանդես բերենք: Դրա համար, ըստ իս, հետևյալ կոնկրետ քայլերը պիտի կատարել՝ ա) 2010 թվականին ստեղծել ցեղասպանագետներից, միջազգային իրավագետներից, դիվանագետներից, գուցե նաև դեմոգրաֆներից և տնտեսագետներից բաղկացած մի հանձնաժողով՝ ուրվագծելու այն հարցերի շրջանակները, որոնց շուրջ պետք է խոսել թուրքերի հետ, բ) 2011 թվականին ձևավորել կառավարական հանձնաժողով, որը կքննարկի և կհստակեցնի վերոնշյալ հանձնաժողովի առաջարկները, կընդունի մի փաստաթուղթ, որում հնարավորինս ամբողջական և գույքագրված կներկայացվեն մեր բոլոր տեսակի կորուստները, հստակ ձևակերպված կլինեն մեր պահանջները, թերևս առաջին հերթին միջազգային հանրության համար կպարզաբանվեն փոխհատուցումները (նյութական, տարածքային) տնօրինելու և իրացնելու եղանակները և այլ հարցեր, գ) 2012 թվականին փաստաթուղթը դնել համաժողովրդական քննարկման (անշուշտ, ներառելով նաև Սփյուռքը), պայմանով, որ տարեվերջին բոլոր շահագրգիռ անձինք և կազմակերպությունները հանձնաժո-

ղովին գրավոր ներկայացնեն իրենց առաջարկությունները, դ) վերջնական տեսքի բերված փաստաթուղթը պաշտոնապես հանձնել թուրքական կողմին՝ առաջարկելով ստեղծել միջկառավարական հանձնաժողով, որը համատեղ կքննարկի Հայոց ցեղասպանության հետ կապված հարցերը, կհամաձայնեցնի դրա հետևանքները վերացնելու միջոցառումները, ե) թուրքական կողմին հիշեցնել, որ 2015 թվականին, եթե անգամ այդ աշխատանքներն ավարտված չլինեն, Մեծ ոճրի 100-րդ տարելիցի կապակցությամբ պետք է հանդես գան համատեղ ստորագրված հուշագրով (կամ այլ անուն ունեցող մի փաստաթղթով), որում կողմերից յուրաքանչյուրն ազատ կլինի արտահայտելու իր դիրքորոշումները խնդրո վերաբերյալ:

Ամենևին միամիտ չենք, որ կարծենք, թե Օսմանյան Թուրքիայի նախաձեռնությամբ սկսված, երիտթուրքերի կառավարության կողմից լայնորեն իրականացված և քեմալական Թուրքիայի առաջնորդների կողմից ավարտին հասցված Հայոց ցեղասպանության փաստը ժամանակակից Թուրքիան հեշտորեն կճանաչի: Սակայն դա չի կարող մեզ համար արդարացում լինել, եթե մենք պասիվություն հանդես բերենք: Այժմվանից պետք է նկատի ունենալ, որ, եթե թուրքական կողմը անարձագանք թողնի նշված առաջարկները, ապա դա չի նշանակի ամեն ինչի վերջը, որովհետև գոյություն ունի ՄԱԿ-ի Միջազգային դատարան: Հայոց ցեղասպանության ճանաչումը պատմական արդարության և բարոյական բավարարման հարց է, որի քաղաքական կարգավորումը պայմանավորված է երկուստեք փոխըմբռնման և կամքի դրսևորմամբ: Հետևապես՝ Թուրքիայի կողմից նման ցանկության բացակայության դեպքում իսկապես միակ քայլը կմնա միջազգային բարձրագույն ատյանին դիմելը: Այս ուղղությամբ արդեն կատարված հսկայական աշխատանքում չափազանց ծանրակշիռ է իրավագիտության դոկտոր, միջազգային իրավունքի պրոֆեսոր Յուրի Բարսեղովի ավանդը, որն իր հիմնարար ուսումնասիրություններով ամուր գիտական հիմք է ստեղծել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Նա համոզված էր, որ «Հայաստանի Հանրապետությունը, որպես ինքնիշխան պետություն, եզակի հնարավորություն ունի Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության պատասխանատվության մասին գործ հարուցել ՄԱԿ-ի Միջազգային դատարանում միակողմանիորեն, Կոնվենցիայի՝ Ցեղասպանության նախազգուշացման և դրա համար պատժելու մասին IX հոդվածի հիման վրա:

... Հարկ է հիշեցնել, որ միջազգային իրավունքում գործում է մի դրույթ, որն ամրագրված է Միջազգային դատարանով ուրիշ կազուսների առնչությամբ, եթե պետությունը վիճաբանության մեջ մտնելու հնարավորություն ունի, բայց այդպես չի վարվում, նշանակում է՝ համաձայն է գոյություն ունեցող դրության հետ» («Երկիր», 24.04.09):

Ահա այսպես, եթե հետևողական չլինենք, կնշանակի համամիտ ենք թուրքի մտքին, թե հայ ժողովուրդը խոտանման ու ոչնչացման ենթակա զանգված է, իսկ դեռևս ապրողներն էլ արժանի են արհամարհանքի: Կընդունե՞նք թուրքի տեսակետը, թե՞ հենց թուրքին ու աշխարհին հակառակը կապացուցենք՝ ցույց կտա 2015 թվականը: Բայց եթե պարտվենք, ապա դա արդեն թուրքից չի լինի, այլ ինքներս մեզանից: Հերթական անգամ և իբրև ավարտ հայոց ողբերգության...

Հ. Գ. – Հայաստանի ղեկավարությունը վստահեցնում է, որ, այսպես կոչված, հայթուրքական արձանագրություններով նախատեսված «պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողովը» չի վիճարկելու ցեղասպանության փաստը: Նշանակում է՝ վերոբերյալ առաջարկությունները չեն կարող միջպետական հարաբերությունների կարգավորման համար խոչընդոտ հանդիսանալ: Այս դիտողությունն արդեն մեր հավանական ընդդիմախոսների համար եմ անում:

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅ,
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

Խրիմյան Հայրիկի ջանքերը հայ-քրդական համագործակցություն զոյացնելու ուղղությամբ

Արմեն Կարապետյան
Պատմական գիտությունների թեկնածու

Հայ-քրդական համագործակցության խնդիրը մտահոգել է 19-րդ և 20-րդ հարյուրամյակների հայ հասարակական, քաղաքական, մշակութային բազմաթիվ գործիչների:

Վերոնշյալ խնդրի կարևորությամբ և հրատապությամբ մեծապես մտահոգվել է արևմտահայ ազգային-հասարակական խոշոր գործիչներից մեկը՝ Մկրտիչ Խրիմյանը՝ արևմտահայերի երբեմնի պատրիարքն ու ապագա Ամենայն հայոց կաթողիկոսը: Սույն հիմնահարցի սրությունը կայանում էր նրանում, որ 19-րդ դարի 80-ական թթ. սուլթան Համիդի կառավարությունն ամեն կերպ ձգտում էր բորբոքել հայ-քրդական հակամարտությունը:

Հատկապես 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական կառավարող վերնախավը, քրդական ցեղերի շրջանում, առաջ էր բերում մոլի հակահայկական տրամադրություններ: Առհասարակ, սուլթան Համիդը կայսրության ժողովուրդներին իրար դեմ հանելու, գրգռելու մեծ վարպետ էր, և երբ 1912 թ. գահընկեց եղած վերադառնում էր Կ. Պոլիս, նավի վրա չթաքցնելով իր դժգոհությունը Բալկանյան պատերազմից և երիտթուրքերի գործելակերպից, բացականչել է. «Երիտասարդ թուրքեր ինչպէ՞ս արգելք չեղան եւ թոյլ տուին, որ Յոյն եւ Պուլկար իրարու հետ բարեկամանան» (Գ. Եազըճեան, Ապտիլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պէյրութ, 1980 թ., էջ 395): Օսմանյան կայսրության թեև հպատակ, սակայն պոտենցիալ ապստամբ եր-

Համիդիյեյի վաշտերը հայկական գյուղում

Մկրտիչ Խրիմյան

կու ժողովուրդներին՝ հայերին ու քրդերին միմյանց դեմ դուրս բերելով, սուլթանը դրանով իսկ մեկ կրակոցով երկու նպատակակետ էր խոցում: Հիրավի, քրդական վայրագություններն ուղղելով հայության դեմ, սուլթանական կառավարությունը ջլատում և թուլացնում էր կայսրությանը թշնամի երկու հակառակորդների ուժերը և հաճույքով ականատես լինում իր իսկ կողմից արհեստականորեն սարքված կոնֆլիկտի հանգուցալուծմանը, ինչը և տեղի ունեցավ 1915 թ.՝ հայոց Մեծ եղեռնով:

Սուլթանը թուրքական 4-րդ բանակի հրամանատար, չերքեզ Զեքի փաշային հանձնարարեց ստեղծել իր այնքան փայփայած «համիդիե» զորագնդերը: Ճշմարիտ է այն դիտարկումը, որ այդ գնդերը, ըստ էության, կազմակերպվեցին ներքին թշնամիների, այսինքն քրիստոնյաների կամ, ավելի ստույգ՝ հայերի դեմ: Քրդերին զինվորական կազմակերպված ձևով հայության դեմ տրամադրելու առաքելությամբ 1879 թ. Վան ուղևորվեց սուլթանի բարձրաստիճան մի պաշտոնյա՝ Բեքիր Սամի բեյը, որի առջև խնդիր էր դրված. «հայոց ազգությունը ճնշելու... մի նոր հնարագէտ, արտաքուստ չը երեւացող և արագ գործադրելի նախագիծ մշակելու և իսկոյն գործի դնելու» (Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Ա, Փարիզ, էջ 117):

Քրդական ցեղախմբերի զինված ոտնձգությունները Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգների հայկական բնակավայրերի նկատմամբ, 19-րդ դարավերջին, ընդունեցին սիստեմատիկ ու համատարած բնույթ, ձեռք բերելով առօրյա ու ամենօրյա կենցաղային երևույթի նշանակություն: Արևմտահայությունը ամբողջովին մատնված էր քրդական թափառող ցեղերի ու ավազակախմբերի քմահաճույքին և կամայականությանը: Այդ ձևով էր սուլթանի կառավարությունը վճռել «...ամբողջ երկիրը - Տաճկահայաստանը աւերակ դարձնել, ամայացնել» («Դրօշակ», թիւ 12, 1895 թ.):

Ժամանակի հայ ազգային-քաղաքական գործիչներից շատերը գնահատելով ու մեծ կարևորություն տալով Օսմանյան կայսրության տարածքում ճնշված ու հեծեծող մյուս ժողովուրդների հետ համերաշխվելու խնդրին, ձգտում էին քայլեր կատարել ստեղծելու թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ-ասորական և հայ-քրդական դաշնակցությունը:

Հայ հասարակական-քաղաքական մտքի երևելի ներկայացուցիչներ Մ. Խրիմյանը, Ռաֆֆին, Գր. Արծրունին, Տեկանցը, Ա. Թոխմախյանը, Մ. Փորթուգալյանը սուր հնչեղությամբ հանրային ասպարեզ բարձրացրեցին սույն հիմնահարցը: Իսկ դրա համար, անշուշտ, կային նաև որոշակի օբյեկտիվ նախադրյալներ:

Ուշագրավ է, որ դեռևս 1890-ական թթ. սկզբին Խրիմյան Հայրիկը կազմել էր բարենորոգումների մի ծրագիր, որով պայմաններ էր առաջադրում դարմանելու հայ-քրդական հակամարտությունը:

Խրիմյանի նախանշած ծրագրով նախատեսվում էր իրագործել հետևյալը.

1. «Նախ եւ առաջ քիւրտերը իրենց անորոշ եւ անսահման դրութենէն հանելով՝ յատուկ եւ սեփական հող եւ երկիր որոշել իրենց բնակութեան համար:

2. ...Դաշտային եւ լեռնային կեանքէն հանել զիրենք եւ տեղափոխել քաղաքներու մէջ, Վանա սահմանէն ի Կարին բերել, Կարնոյ եւ Մշոյ սահ-

մանէն ի Վան տանել» (Յ. Սիրունի, Պոլիս և իր դերը, Գ հատոր, 1987 թ., Անթիլիաս, էջ 494):

Միաժամանակ Մ. Խրիմյանը քաջատեղյակ լինելով Արևմտահայաստանում քրդերի բնակության և տեղաշարժերի հիմնական գոտիներին ու երթուղիներին, առաջարկում է. «...Քիւրտերու բնակութեանց տեղերը յարմար դիրքերու վրայ մի քանի փոքր զօրանոցներ հաստատել» (Յ. Սիրունի, էջ 494):

Հետաքրքրական է, որ Խրիմյանը հերքում է թուրքական իշխանությունների այն պնդումը, թե պետական զորությամբ քրդերի դրությունը բարեկարգելու փորձերը կստիպեն քրդական ցեղերին գաղթելու երկրից: Սոսկ ենթադրություն համարելով այս պնդումը՝ նա համոզված էր, որ քրդերն այնչափ հիմարացած չեն, որ ընդարձակ, ջրավետ և խոտավետ երկիրը լքեն:

Խրիմյանը առաջարկում էր, որ Բ. Դուռը ընտրի արդարակորով, անխաբ ու կարողաձեռն կառավարություն Վանի կուսակալության համար, քանի որ Վանի գավառը խիստ ընդարձակ է և քրդերի մի զգալի մասը վերոնշյալ տարածքում է արմատավորված:

Խրիմյանը խորապես գիտակցում էր, որ քրդերին սանձահարելն ու կարգուկանոնի կոչելը Կ. Պոլսի կենտրոնական կառավարության համար ամենևին էլ անհնարին գործ չէ՝ անհրաժեշտ կամքի և ցանկության դեպքում: Այդ են վկայում ժամանակաշրջանի և հետագայի բազմաթիվ փաստերն ու վկայակոչումները: Նույնիսկ օտարերկրյա դեսպաններն ու հյուպատոսները իրենց զեկուցագրերում և հուշագրություններում աներկբա հաստատում են նույն իրողությունը:

Այսպես, Վանում ռուսաց հյուպատոս Վլ. Մաևսկին ևս, ի թիվս այլոց, հավելյալ անգամ հավաստում է, որ 1896 թ. հունիսյան դեպքերի ժամանակ բաշիբոզուկներին թուրքական իշխանություններն էին հրավիրել Վան՝ մասնակցելու հայերի ջարդերին ու թալանին:

Այս ամենը սպառիչ կերպով հաստատում է այն իրողությունը, որ թերևս կողք-կողքի ապրող հայ և քուրդ ժողովուրդները կարող էին իրենց ներհակություններն ու տարաձայնությունները կարգավորել և փոխադարձ համաձայնության գալ, եթե թուրքական կառավարությունը «...միջամուխ չըլլար, հայ մշակ եւ արհեստաւոր ժողովուրդին դէմ քիւրտ ցեղերը չգրգռէր, հարստահարութիւններու չմղէր» («Պայքար», Բոստոն, թիվ 278, 1950 թ.):

Այսպիսով, ի հակառակ Մ. Խրիմյանի սույն ծրագրի, օսմանյան իշխանությունները հետամուտ եղան մշտապես բորբոք ու արյունալից լարվածության մեջ պահել հայ-քրդական հարաբերությունները:

Հետագայում նույնպես Խրիմյան Հայրիկի և հայ ազգային գործիչների ուշադրության առանցքում արդիական մնաց հայ-քրդական կնճիռի կարգավորման և սուլթանական ռեժիմի դեմ համատեղ ուժերով հանդես գալու խնդիրը:

Վարագա վանքը երեկ եւ այսօր

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Ա. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, Գ. Մ. ԱՐՇԱԿՅԱՆ

Ա. Գազայի ռմբակոծությունը և թուրք-իսրայելյան հարաբերությունների լարվածության սկիզբը:

Իսրայել-Թուրքիա հարաբերությունները, որոնք բավականին սերտ բնույթ էին կրում, լուրջ փորձությունների առջև կանգնեցին Իսրայելի կողմից պաղեստինյան տարածքները 2008 թ. վերջին սկսված և 22 օր տևած ռմբահարումների հետևանքով («Ձուլված արճիճ» գործողություն): Լարվածությունը սկսվեց այն բանից հետո, երբ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը խստորեն դատապարտեց Իսրայելի կողմից Գազայի ռմբակոծությունը՝ այն որակելով ցեղասպանություն: Թեև 2009 թ. հունվարի 17-ին Իսրայելը միակողմանի զինադադար հայտարարեց և սկսեց զորքերի դուրսբերումը Գազայի հատվածից, իսկ «Համասը» մեկ շաբաթով միացավ զինադադարին, բայց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը շարունակում էր դատապարտել Իսրայելի գործողությունները: Նախքան զինադադարը նա Իսրայելին դատապարտում էր Գազայի հատվածում ռազմական գործողություններ իրականացնելու համար: Զինադադարից հետո սկսեց դատապարտել «Պաղեստինին իբրև պետություն», իսկ «Համասին»՝ որպես «երկրի օրինական իշխանություն» չճանաչելու համար՝ պատճառաբանելով, թե 2005 թ. հունվարի ընտրություններում «Համասը» ստացել է ընտրողների ընդհանուր ձայների 75 տոկոսը: Էրդողանը Իսրայելին մեղադրեց նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը կոպտորեն խախտելու և Ժնևի կոնվենցիան ոտնահարելու մեջ:

Հարկ է նշել, որ Էրդողանի ելույթները ամենայն խստությամբ քննադատել էր Քնեսեթի պատգամավոր, Իսրայելի փոխարտգործնախարար և վարչապետ Օլմերտի մերձավոր Մաջալի Վիբին: Նա 2009 թ. հունվարի 12-ին մասնավորապես ասել էր. «Էրդողանի հայտարարությունները զգացմունքային են, չեն արտացոլում իրականությունը: Եթե նա անկողմնակալ լիներ՝ հրթիռակոծությունը դադարեցնելու կոչով կդիմեր նաև «Համասին»: Հույս ունենք, որ մեր հարաբերությունները չեն վատանա

«Սիրալիր» ընդունելություն

Էրդողանի հայտարարություններով: Էրդողանն ասում է, որ Գազայում «ցեղասպանություն» է իրականացվում: Ինչ է, մե՞նք էլ որպես «ցեղասպանություն» բնութագրենք Թուրքիայում հայերի հետ կատարվածը»:

Թուրք-իսրայելյան հարաբերությունները խիստ լարվեցին 2009 թ. հունվարի 30-ին Դավոսում տեղի ունեցած Համաշխարհային տնտեսական համաժողովի «Գազան՝ մոդել Միջին Արևելքի համար» խորհրդաժողովից հետո: Ուղիղ եթերում Էրդողանը նշել էր, որ Իսրայելը բացօթյա կալանավայրի է վերածել Գազան, անհամաչափ ուժ է օգտագործել և անխնա սպանել է երեխաների: Բացի այդ, Թուրքիայի վարչապետը կոպտորեն հանդիմանել էր Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսին՝ նշելով. «Քո արարքը բխում է հանցագործի հոգեբանությունից և իսրայելցիներդ սպանել լավ գիտեք»:

Վարչապետ Էրդողանի խոսքերին անմիջապես արձագանքեցին Իսրայելն ու ԱՄՆ-ի հրեական կազմակերպությունները, և Հայոց ցեղասպանության ճանաչման իրենց պատրաստակամությունը հայտնեցին:

Մասնավորապես, ԱՄՆ-ի հրեական ամենաազդեցիկ 5 կազմակերպությունները նամակ հղեցին Թուրքիայի վարչապետին, որտեղ իրենց լուրջ վրդովմունքը հայտնեցին Էրդողանին Թուրքիայում ծավալվող «հակահրայելական» դրսևորումների կապակցությամբ: Նամակը ստորագրել էին Ամերիկայի հրեական կոմիտեի՝ AJC-ի համակարգող Իսաակսոնը, «Բնայ բրիտի» ղեկավար Մարիաշինը, Հակավարկաբեկման լիգայի՝ ADL-ի հրաժարյալ նախագահ Ֆոքսմանը, Ամերիկայի հրեական գլխավոր կազմակերպությունների համագումարի՝ CPMAJO-ի գործադիր խորհրդի նախագահ Հոնլեյնը, Ազգային անվտանգության գործերի հրեական ինստիտուտի՝ JINSA-ի ղեկավար Նյումանը:

Աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները, մեղադրելով Էրդողանին «դիվանագիտական քաղաքավարությանն անհարիր արարքի» համար, նույնիսկ փորձեցին անձնական վիրավորանք հասցնել, թե նա «ջղաձգության նոպայի ազդեցության տակ կռիվ է սարքել»:

Ակնկալվում էր, որ վարչապետ Էրդողանը հետքայլ կկատարի, սակայն դա տեղի չունեցավ: Ավելին, Թուրքիայում, արաբական երկրներում, Պաղեստինում, որտեղ նորածին տղաներին տալիս են Ռեջեփ Թայիփ, իսկ աղջիկներին Էմինե (նրա տիկնոջ) անունները, և իսլամական աշխարհում հերոսացած Էրդողանը սկսեց նույն ոճով դատապարտել նաև Իսրայելի նախագահ Պերեսին: Էրդողանի ելույթը դրդվատեցին պաղեստինյան «Համաս» արմատական շարժման ներկայացուցիչները, իսկ թուրքերն օդանավակայանում իրենց վարչապետին դիմավորել էին որպես ազգային հերոսի: Իր հերթին, Թեհրանի քաղաքապետի որոշմամբ, Թուրքիայի վարչապետը դարձել էր Թեհրանի պատվավոր քաղաքացի: Դա էլ ավելի սրեց Իսրայել-Թուրքիա հարաբերությունների լարվածությունը:

Բ. Թուրք-իսրայելյան հարաբերություններում առկա լարվածության խորացումը և

Հայոց ցեղասպանության խնդիրը:

2009 թ. հունվարից Թուրքիայի և Իսրայելի միջև ծագած ճգնաժամը նոր թափով սկսեց զարգանալ 2009 թ. սեպտեմբերից: Պաշտոնական Անկարան ներկայումս ամեն կերպ փորձում է հանդես գալ պաղեստինցիների իրավունքների պաշտպանի դերում: Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն մեկ անգամ ևս իր երկրի անհանգստությունն էր արտահայտել Գազայի շրջանում տիրող իրավիճակի վերաբերյալ և քննադատության ենթարկել Թել Ավիվի որդեգրած քաղաքականությունը: Թուրքական կողմի պնդմամբ, Իսրայելը չի նպաստում տարածաշրջանի կայունությանը: Իսրայելի՝ տարածաշրջանային նախկին դաշնակից Թուրքիան այսօր այդ երկրի հանդեպ հարաբերություններում հանդես է գալիս շատ ավելի կոշտ դիրքերից: Մեր կարծիքով, դա նախ և առաջ պայմանավորված է այն փաստով, որ ներկայումս պաշտոնական Անկարան ձգտում է մեծացնել իր ազդեցությունը մահմեդական աշխարհում: Իսկ այդ նպատակին հասնելու ամենահեշտ տարբերակը, իհարկե, մահմեդական աշխարհի «թիվ մեկ թշնամուն»՝ Իսրայելին հակադրվելն է:

Թուրքական թշնամանքի նորագույն օրինակը Իսրայելին չներառելն էր բազմազգ զորավարժություններում, որոնք տեղի ունեցան Թուրքիայում 2009 թ. հոկտեմբերի 12-ին: Ի նշան բողոքի՝ ԱՄՆ-ն, Իտալիան և Նիդեռլանդները չներկայացրին զորավարժություններին իրենց մասնակցության հայտերը: Այնուհետև ավելի վրդովեցուցիչ քայլ կատարելով՝ Թուրքիան հայտարարեց, որ փոխարենը համատեղ զինավարժություններ է անցկացնելու Սիրիայի հետ, որն Իսրայելի գլխավոր թշնամին է: Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ Իսրայելին չներառելը զինավարժություններում պայմանավորված էր թուրք ժողովրդի պահանջով:

Այս միջադեպը նշանակալի զարգացում է մատնանշում. Իսրայելի գործողությունների հանդեպ Թուրքիայի անհամաձայնությունն ակնհայտ է: Առաջին անգամ Թուրքիայի զինվորականությունը միացավ քաղաքացիական կառավարությանը՝ որդեգրելով հակաիսրայելական դիրքորոշում: Ավելին, Թուրքիան առաջ անցնելով բանավոր մեղադրանքներից՝ ձեռնարկեց կոնկրետ գործողություն: Տարիներ շարունակ Իսրայելի կառավարությունը հանդուրժում էր թուրք պաշտոնյաների հայտարարությունները, քանի որ իր ռազմաօդային ուժերին թույլատրվում էր օգտագործել Թուրքիայի օդային տարածքը, և հետախուզությունն էլ համագործակցում էր թուրք գործընկերների հետ: Իսրայելը նաև ծանր հրետանի էր վաճառում Թուրքիային:

Սակայն իսրայելցիների զայրույթը կրկնապատկվեց, երբ հոկտեմբերի սկզբներին թուրքական հեռուստակայանից հեռարձակվեցին տեսարաններ, թե ինչպես են իսրայելցի զինվորները սպանում պաղեստինցի երեխաներին և գործում այլ բռնարարքներ: Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը դրան արձագանքեց՝ Թուրքիայի դեսպանին իր մոտ հրավիրելով և մեղադրելով Թուրքիային իսրայելցիների հանդեպ թշնամանք սերմանելու մեջ: Նա նշեց, որ նույնիսկ Իսրայելի թշնամիները նման հեռուստասերիալներ չեն ցուցադրում: Իսկ Իսրայելի փոխվարչապետ Սիլվան Շալոմը Թուրքիայից պահանջեց «խելքի գալ»: Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն կտրականապես մերժեց Թուրքիայի միջնորդական դերը Սիրիայի հետ բանակցություններում:

Միևնույն ժամանակ Իսրայելը հայտնել է իր մտավախությունը, որ Թուրքիայում իշխանության եկած իսլամիստական կուսակցությունը կարողացել է ճնշել բանակի դիմադրությունն ու Թուրքիայի և Իսրայելի միջև ավանդական ռազմավարական համագործակցությունը մոտեցել է իր վերջին: Ավելին, իսրայելյան լրատվամիջոցները նշում են, որ Թուրքիան անչափ մոտ է Իրանի հետ դաշինքի ստեղծմանը, ինչը, ըստ իսրայելցիների, հաստատում են նաև Հայաստանի հետ վերջերս ստորագրած համաձայնագրերը: Ամրապնդվում են Թուրքիայի հարաբերությունները Սիրիայի հետ, և Իսրայելին շատ է մտահոգում Անկարա-

Դամասկոս-Թեհրան դաշինքի ձևավորումը, քանի որ կարող է լրջորեն վտանգվել Իսրայելի անվտանգությունը: Իրենց հերթին իսրայելյան լրատվամիջոցները ավելի հաճախ սկսեցին հայտարարել, թե ռազմավարական կապերը Թուրքիայի հետ կարծես «ավարտվել են»:

Իսրայելի հասարակությանը կոչեր են արվում բոյկոտելու թուրքական առողջարաններ այցելությունները: Մասնավորապես, Հանրային ռադիոն (NPR) հաղորդել է, որ Իսրայելի ամենամեծ արհմիությունը այսուհետ դեպի Թուրքիա շրջագայություններ չի կազմակերպելու իր հազարավոր աշխատողների համար: Փոխարենը նրանց առաջարկելու է այցելել Հունաստան և Բուլղարիա: Իսկ Իսրայելի կառավարության շատ անդամներ աննախադեպ քայլ կատարելով՝ հավաստել են, որ ներկա չեն գտնվելու Թուրքիայի անկախության օրվա առթիվ թուրքական դեսպանատան կազմակերպած երեկոյին:

Թուրք-իսրայելական հարաբերությունների վատթարացման կապակցությամբ մտահոգություն էր հայտնել ԱՄՆ-ի հրեական ամենաազդեցիկ կազմակերպություններից մեկի՝ Հակադիֆամացիոն լիգայի (ADL) ղեկավար Ավրաամ Ֆոքսմանը՝ նշելով, որ լարվածությունը Թուրքիայի և Իսրայելի հարաբերություններում չի անդրադառնա «հրեա-թուրքական սերտ բարեկամության վրա»: Ֆոքսմանն ասել է, որ «այդ բարեկամությունը հին ու ամուր է, ուստի նոր խնդիրները չեն կարող ազդել մեզ վրա: Եթե Թուրքիան ցանկանում է մերձենալ արաբական ու մերձավորարևելյան երկրների հետ, ապա խնդիր չկա: Սակայն ինչո՞ւ դա պետք է արվի ի վնաս թուրք-հրեական բարեկամության: Ես հուսով եմ, որ դա ժամանակավոր բնույթ կկրի: Անդրադառնալով Հայոց ցեղասպանությանը՝ Ֆոքսմանը նշել է, որ Հակադիֆամացիոն լիգայի դիրքորոշումն այդ հարցում անփոփոխ է մնացել: Ըստ նրա, Հայոց ցեղասպանության հարցը պետք է լուծվի Թուրքիայի ու Հայաստանի միջև, ոչ թե ԱՄՆ-ի Կոնգրեսում կամ Ֆրանսիայի խորհրդարանում:

Այնուամենայնիվ թուրք-իսրայելյան լարվածությունը շարունակում է զարգանալ, ինչի վառ օրինակներից էր 2009 թ. նոյեմբերի 17-ին Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի հայտարարությունը, թե Թուրքիայի իսրայելական քաղաքականության մեջ չկա որևէ փոփոխություն, և որ տարածաշրջանում Իսրայելի որդեգրած քաղաքականությունը միանգամայն հակասում է Թուրքիայի քաղաքականությանը, ավելացնելով. «Մենք Երուսաղեմը որպես Իսրայելի մայրաքաղաք չենք ճանաչում: Համոզված ենք, որ Արևելյան Երուսաղեմը պաղեստինյան տարածք է: Այդ իսկ պատճառով էլ մեր դեսպանատունը ոչ թե Երուսաղեմում է, այլ Թել Ավիվում»: Դրան հաջորդեց նոյեմբերի 20-ին կատարած թուրքական կողմի հայտարարությունն այն մասին, որ չեղյալ է հայտարարվում Իսրայելի հետ դեռ 2005 թվականին կնքված պայմանագիրը, որի համաձայն Թուրքիան Իսրայելից պետք է ձեռք բերեր 10 անօդաչու թռչող սարքեր (Heron): Այս հայտարարությունն էլ ավելի սրեց թուրք-իսրայելյան հարաբերությունները, ինչը ակնհայտորեն զգացել էին այդ օրերին ԱՄՆ-ում գտնվող Թուրքիայի կառավարող «Արդարություն և զարգացում» կուսակցության պատգամավորները: Մասնավորապես, երեք հոգուց բաղկացած թուրք պատգամավորների առաքելությունը հանդիպումներ էր ունեցել նաև ԱՄՆ-ի 13 տարբեր հրեական կազմակերպությունների ղեկավարների հետ և Հայոց ցեղասպանության ճանաչմանը խոչընդոտելու համար աջակցություն խնդրել նրանցից: Էրդողանի դավոսյան ելույթից դրժգոհ հրեական կազմակերպությունները հայտարարել էին, որ «ո՛չ կխոչընդոտեն, ո՛չ էլ կաջակցեն հայկական օրինագծի ընդունմանը»: «Ամենաշատը կարող ենք չեզոքություն պահպանել ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում»,- հայտարարել էին նրանք: Հավելենք, որ AIPAC, ADL, National Jewish Democratic Counsil, EXEC DIR, World Zionist Council, AJC'M'TEE, UJC, Republican Jewish Coalition գլխավորությամբ՝ 13 հրեական կազմակերպության ղեկավարներից որևէ մեկը չի խոստացել, որ կաջակցի Թուրքիային:

Հարկ է նշել, որ Իսրայելի կառավարությունը քայլեր էր ձեռնարկում՝ թուլացնելու թուրք-իսրայելական լարվածությունը, և այդ նպատակով 2009 թ. նոյեմբերի 23-ին Թուրքիա էր ժամանել Իսրայելի առևտրի և արդյունաբերության նախարար Բինիամին Բեն Էլեզիրը: Վերջինս Թուրքիայում հայտարարել էր, թե

Իսրայելը կողմ է, որ Թուրքիան շարունակի Իսրայել-Սիրիա հարաբերություններում հանդես գալ որպես միջնորդ կողմ, սակայն մեկ պայմանով, որ Թուրքիան պահպանի իր անկողմնակալությունը:

Վերոհիշյալ այցից օրեր առաջ, Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն հայտարարել էր, թե Սիրիայի հետ բանակցություններում իրենց միջնորդ հարկավոր չէ, հատկապես այնպիսի միջնորդ, ինչպիսին է Թուրքիան և այդ երկրի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Հրեաների դեմ աճող ատելության մեջ մեղադրվել էր, մասնավորապես, հենց Թուրքիայի վարչապետը: Նկատենք, որ Իսրայելում Էրդողանին համարում են հրեա ժողովրդի թշնամի: Հրեա վերլուծաբանների գնահատմամբ, Թուրքիայի վարչապետը մեծ վտանգ է ներկայացնում ոչ միայն Իսրայելի, այլև ողջ արևմտյան քաղաքակրթության համար: Ուստի պատահական չէ, որ իսրայելական մի շարք թերթեր և մասնավորապես «Միջին Արևելքի ֆորում» վերլուծական ընկերության նախագահ Դանիել Պիպեսը համարում են, որ Թուրքիայի վարչապետը Բեն Լադենից ավելի վտանգավոր է: Դեռ ավելին, Իսրայելում կարծիքներ են հնչում, որ եթե Անկարան շարունակի Իրանի հետ վարել «ջերմ քաղաքականություն», ապա Թել Ավիվն այլևս դա չի հանդուրժի և գլխիվայր կփոխի իր քաղաքականությունը:

Ըստ էության թուրք-իսրայելյան հարաբերությունները շարունակում են լարված մնալ: 2009 թ. դեկտեմբերի 2-ին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը կրկին հակահրայելական հայտարարությամբ է աչքի ընկել՝ հայտարարելով. «Միջին Արևելքում կայուն խաղաղություն պետք է ապահովենք: Պաղեստինցիներն էլ անկախ պետություն ստեղծելու իրավունք ունեն: Թուրքիան Իսրայելի սխալ քաղաքականությունը անպատասխան չի թողնի»:

Այս համատեքստում, 2009 թ. դեկտեմբերի 6-8-ը Վաշինգտոն կատարած այցի ընթացքում, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի չհանդիպելը ԱՄՆ-ի հրեական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մեկ անգամ ևս վկայում է թուրք-իսրայելյան հարաբերություններում առկա լարվածության մեծացման մասին: Հանգուցյալ նախագահ Թուրգութ Օզալից հետո Էրդողանը Թուրքիայի առաջին ղեկավարն էր, որ չհանդիպեց ԱՄՆ-ի հրեական համայնքի հետ: Բացի այդ, նույն օրերին, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը կոշտ նախազգուշական հայտարարություն է արել Իսրայելի հասցեին: Թուրքիայի վարչապետը հստակ նշել է. «Եթե Իսրայելը երրորդ երկրի դեմ լրտեսական գործողություններ իրականացնելու նպատակով փորձի խախտել Թուրքիայի օդային տարածքը, ապա Թուրքիայի ռեակցիոն պատասխանը «երկրաշարժի» նման կլինի: Իսրայելը մեկ այլ երկրի վրա հարձակվելու համար չի կարող օգտագործել մեր հետ ունեցած հարաբերությունը: Իսրայելը չի կարող սպասել, որ մենք ձեռքներս ծալած կնստենք»: Մասնավորապես խոսքը գնում է վերջին օրերին ակտիվորեն շրջանառվող այն լուրի մասին, թե Իրանի դեմ իրականացվելիք հարձակումից առաջ, հետախուզական ինֆորմացիա հավաքելու նպատակով, իսրայելական ռեակտիվ ինքնաթիռները խախտել են Թուրքիայի օդային սահմանը:

Այնուամենայնիվ Իսրայելի ղեկավարությունը փորձում է ինչ-որ կերպ հաղթահարել թուրք-իսրայելյան հարաբերությունների առկա ճգնաժամը: Այդ կապակցությամբ 2009 թ. դեկտեմբերի 9-ին, Իսրայելում Թուրքիայի նոր դեսպան Օգյուզ Սելիքկոլի նշանակման առիթով կազմակերպված հանդիպման ժամանակ, Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը հայտարարել է, որ ցանկանում է Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին տեսնել Թել Ավիվում: Շիմոն Պերեսը մասնավորապես նշել է. «Մենք դեռ ակնկալում ենք, որ Թուրքիայի նախագահը կայցելի Իսրայել: Մեր դռները միշտ բաց են նրա առջև: Իսրայելն ու Թուրքիան փոխհարաբերությունների երկար պատմություն ունեն, իսկ հետագայում՝ նաև պայծառ ապագա: Մենք ցանկանում ենք, որպեսզի մեր հարաբերությունները Թուրքիայի հետ շարունակեն բարելավվել»:

Թուրքիայի և Իսրայելի հարաբերություններում առկա լարվածությունը ընդհուպ դիվանագիտական հարաբերությունների խզման եզրին հասան 2010 թ. հունվարին: Իսրայելի փոխարտգործնախարար Դանի Այալոն Թուրքիայի դեսպանին հրավիրել էր ԱԳՆ և բողոքի նոտա հանձնել նրան՝ թուրքական հեռուստաընկերություններից մեկի եթե-

րով հակահրայելական սերիալ ցուցադրելու համար, որտեղ իսրայելական հատուկ ծառայության աշխատակիցը ներկայացվում է որպես երեխա առևանգող: Հանդիպման ժամանակ Այալոնը հրաժարվել է սեղմել Թուրքիայի դեսպան Ահմեդ Օղուզ Չելիքոլի ձեռքը, երբ այդ մասին խնդրել են լրագրողները: Ավելին, նա երդայերեն ասել է լրագրողներին. «Մենք միայն ցանկանում ենք, որպեսզի ընդգծվի, որ նա մեզանից ավելի ցածր աթոռի է նստած, և որ սեղանին միայն մեկ դրոշ կա»: Ապա անգլերենով դիմել է դեսպանին ասելով. «Ցավոք, ինչ-որ բան մեզ անհանգստացնում է, ինչը ես ցանկանում եմ քննարկել Ձեզ հետ առանց մամուլի ներկայության, որպեսզի պահպանվի գաղտնիությունը»: Այս միջադեպը խիստ արձագանք ստացավ Թուրքիայում: Թուրքիայի իշխանությունները հայտարարեցին, որ Իսրայելը պետք է ներողություն խնդրի դիվանագիտական խայտառակ վարվելակերպի համար, հակառակ դեպքում Անկարան հետ կկանչի Իսրայելում իր դեսպանին՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Իսրայելի փոխարտգործնախարարը հարկադրված եղավ երկու անգամ ուղերձ հղել Անկարա, ինչը բավարարել էր թուրքական կողմին, և թվում էր, թե դրանով հարթվել է Թուրքիա-Իսրայել դիվանագիտական ճգնաժամը: Սակայն 2010 թ. հունվարի 17-ին Թուրքիա այցելած Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը ցանկություն էր հայտնել հանդիպել Թուրքիայի վարչապետի և նախագահի հետ, սակայն մերժվել էր՝ թուրք-իսրայելյան դիվանագիտական սկանդալի հետ կապված:

Հարկ է նշել, որ թուրք-իսրայելյան հարաբերությունների լարվածության պայմաններում և դրա զարգացման բոլոր փուլերում, Թուրքիայի հակահրայելյան քաղաքականության կանխարգելման համար, Իսրայելի իշխանությունները, որպես սպառնալիք և հակազդեցության միջոց, հաճախ օգտագործում են Հայոց ցեղասպանության ճանաչման հնարավորությունը ինչպես Իսրայելի, այնպես էլ ԱՄՆ-ի հրեական կազմակերպությունների աջակցությամբ՝ ԱՄՆ-ի կողմից: Թուրքիայի հակահրայելյան բացահայտ դրսևորումների պայմաններում Իսրայելի քաղաքական շրջանակներում էլ ավելի են լրջանում խոսակցությունները այն մասին, թե Իսրայելի դեմ Թուրքիայի իրականացրած քաղաքականության պատճառով Թել Ավիվը պետք է դիմի ԱՄՆ-ին և Եվրոպային՝ այլևս չօգնել թուրքերին՝ ժխտելու Հայոց ցեղասպանության փաստը:

Այս համատեքստում ուշագրավ է այն փաստը, որ 2009 թ. հունիսին ԱՄՆ-ում Իսրայելի նորանշանակ դեսպան Մայքլ Օրենը 1915 թվականի ողբերգական դեպքերն անվանել էր ցեղասպանություն:

Իսրայելի հասարակական շրջանակները և բնակչության մի ստվար հատված նույնպես խիստ դժգոհ է Իսրայելի հանդեպ Թուրքիայի իրականացրած նման քաղաքականությունից: Մասնավորապես, մեծ թվով վրդովված հրեաներ կարծում են, որ որպես հակաքայլ Իսրայելը պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Օրինակ, «Իսրայել Հայում» թերթում Դան Մարգալիտը թուրքերին մեղադրում է ոչ միայն ցեղասպանություն գործելու, այլև կատարվածը ժխտելու և իրենց գայրույթն արտահայտող ուրիշ երկրների դեմ պայքարելու «շարունակվող ոճրագործության մեջ»:

Ռամաթ Գանում գտնվող Բար-Լան համալսարանի ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի (BESA) վարիչ Եֆրայիմ Ինբարը հիշեցնում է թուրքերին, որ նրանք դեռևս կարիք ունեն «Վաշինգտոնում Իսրայելի ներգործությանը, որպեսզի Կոնգրեսը չընդունի հայկական ցեղասպանությունը հաստատող բանաձևը»:

Ուշագրավ էր հատկապես 2009 թ. հոկտեմբերի 16-ին իսրայելական «Իմ տիրցու» («Եթե ցանկանաք») շարժման ներկայացուցիչների կողմից Թել Ավիվում թուրքական դեսպանատան առջև անցկացրած բողոքի ցույցը: Շարժման ակտիվիստները թուրքական իշխանություններից պահանջել են ճանաչել Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության փաստը: Ցուցարարները ունեցել են ցեղասպանության վերաբերյալ նկարներ: Հատկանշական է, որ «հայկական» ցույցը Իսրայելում հնարավոր եղավ միայն թուրք-իսրայելյան վատթարացող հարաբերությունների ֆոնին:

Թուրք-իսրայելական հարաբերությունների վատթարացման ֆոնին, Իսրայելի իշխանությունների թույլտվությամբ, Իսրայելում գործող «Արարատ» հայկական միության նախաձեռնությամբ 2010

թ.-ին Եղեռնի զոհերին նվիրված հուշարձան է կանգնեցվել - լու Պետաշ Տիկվայում: Փաստորեն Հայոց ցեղասպանության ճանաչման իսրայելական պահանջներն ավելի շատ հակաթուրքական տրամադրությունների հետևանք են, այլ ոչ թե արդարության վերականգնման ցանկություն: Թուրք ժխտողականների հետ համագործակցելու իր անցյալի մեղքը քավելու համար Իսրայելն առաջին հերթին պետք է պաշտոնապես ճանաչի Հայոց ցեղասպանության փաստը և քարոզչություն ծավալի, որպեսզի այլ պետություններ ևս ճանաչեն:

Այս համատեքստում ուշագրավ է այն, որ 2010 թ. փետրվարին ԱՄՆ-ի Բոստոնի և Մասաչուսեթսի հայկական և հրեական համայնքները հանդես են եկել on-line պահանջագրով, որով կոչ են արել ԱՄՆ-ի նախագահին և Կոնգրեսին ընդունել Հայոց ցեղասպանության ճանաչման մասին 252-րդ բանաձևը:

Թուրք-իսրայելյան այս լարվածությունն ամերիկահայ որոշ շրջանակներում առաջացրեց ոգևորություն, փոխադարձաբար մտահոգություն պատճառելով թուրքական շրջանակներին: Ինչպես ոգևորության, այնպես էլ մտահոգության հիմքում Իսրայելի և ԱՄՆ-ի հրեական կազմակերպությունների՝ Հայոց ցեղասպանության ճանաչմանը նպաստելու պատրաստակամությունն էր: Թուրքիայի ԱԳՆ ղեկավար Ալի Բաբաջանը նույնիսկ հայտարարեց, որ ԱՄՆ-ի հրեական լոբբին նախկինի պես չի աջակցի Թուրքիային Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումը կանխելու հարցում: Միևնույն ժամանակ Բաբաջանը հայտարարել էր. «Սակայն թուրք-իսրայելական հարաբերությունները կրում են ռազմավարական բնույթ: Առանց Թուրքիայի աջակցության տարածաշրջանում այնքան էլ հեշտ չի լինի Իսրայելի գոյությունը: Այո, քննարկման առարկա չէ հրեական լոբբիի՝ ամերիկյան վարչակազմի և Կոնգրեսի վրա ունեցած ազդեցությունը: Սակայն 1915 թ. իրադարձությունների առնչությամբ վերջին տարիներին տարակարծություններ են ձևավորվել հրեական կազմակերպությունների միջև: Հրեական կազմակերպությունները նախկինի պես չեն որդեգրում, այսպես կոչված, Հայոց ցեղասպանության պնդումների դեմ աջակցող գործելաոճ»:

Թուրք-իսրայելյան հարաբերությունները մեծ նշանակություն ունեն երկու երկրների համար, ուստի երկկողմ հարաբերություններում առկա լարվածության թուլացման անհրաժեշտությունը ստիպեց ԱՄՆ-ի հրեական ամենաազդեցիկ կազմակերպություններից Հակավարկաբեկման լիգային (ADL) «ընթռնումով» մոտենալ Էրդողանի քննադատություններին: Այդ ընթացքում Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերտը նախազգուշացրեց կառավարության անդամներին. «Թուրքիայի հետ մեր հարաբերությունները կարևոր են, հետևաբար խորհուրդ եմ տալիս չափավորել հայտարարությունների ոճը»: Իսկ Վաշինգտոնը հիշեցրեց, որ Իսրայելն ու Թուրքիան ԱՄՆ-ի վաղեմի դաշնակիցներն են տարածաշրջանում:

Որպես հետևանք՝ Իսրայելի խորհրդարանը (Քնեսեթ) մերժեց քննության առնել Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի նախագիծը, որը 2009 թ. ապրիլին խորհրդարան էր ներկայացրել Իսրայելի «Մերեց» կուսակցության նախագահ Խայիմ Օրոնը: Սույն նախագծին դեմ էր հատկապես Իսրայելի կառավարությունը:

Թուրքական գործոնը հետխորհրդային որոշ հակամարտություններում

Կարեն Վերանյան

Թուրքական գործոնն Աբխազիայում

Թուրքիան մշտապես դիտարկել է Աբխազիան իր քաղաքական, տնտեսական ու մշակութային ազդեցության տարածման կարևորագույն գոտիներից մեկը: Պատմության տարբեր ժամանակահատվածներում ակնհայտ են եղել Թուրքիայի հավակնությունները Աբխազիայի նկատմամբ: Աբխազիայում թուրքական մշակութային ներթափանցումը լայն թափ ստացավ դեռևս Օսմանյան կայսրության տիրապետության ժամանակաշրջանում, երբ 16-րդ դարում թուրքական իշխանությունները բռնի ուժով ներմուծեցին իսլամն Աբխազիա: Երկրում իսլամի ազդեցությունն ուժեղացավ հատկապես 17-րդ դարի սկզբներից: Պատմագիտական աղբյուրների հիշատակումների համաձայն, աբխազներից առաջինը իսլամ ընդունեցին իշխաններն ու արքունիքի ներկայացուցիչները, որոնցից շատերը տնտեսապես ու քաղաքականապես կապված էին թուրքական ընտրանու ներկայացուցիչների հետ: Որոշ տվյալներով, աբխազ ֆեոդալների մի մասի երեխաները կրթություն էին ստանում Օսմանյան կայսրության մայրաքաղաքում՝ յուրացնելով թուրքերեն լեզուն ու թուրքական ավանդույթները:

Չնայած թուրքական կողմի ջանքերին՝ Աբխազիայում լայնորեն չտարածվեց իսլամը և, այդուհանդերձ, այն չգտավ լայն հասարակական ընկալում և ընդունելի դարձավ հիմնականում միայն իշխանական խավերի շրջանում: Ներկայում թեև իսլամը նույնպես չունի խորը արմատներ երկրի հասարակությունում, այնուամենայնիվ, ինչպես ցույց են տալիս փաստերը, որոշակի աստիճանական զարգացում է ապրում: Ոչ պաշտոնական տվյալներով, այսօր Աբխազիայի բնակչության 20-25%-ը իսլամադավան է: Նրանց շարքում, սակայն, փոքր տոկոս են կազմում իսլամի օրենքներին կանոնավորապես հետևողները:

2008 թ. վրաց-հարավօսական իրադարձություններից հետո նոր լիցք հաղորդվեց թուրք-աբխազական կրոնական փոխհարաբերություններին: Թուրքական աղբյուրների համաձայն, 2008 թ. դեկտեմբերի կեսերին Անկարայում տեղի ունեցավ Թուրքիայի կրոնի հարցերով վարչության ղեկավար Ալի Բարդակ-օղլուի հանդիպումը Աբխազիայի մուֆթիի տեղակալ Թիմուր Չիբայի հետ: Հան-

դիպման արդյունքում որոշում ընդունվեց ամրապնդել ու խորացնել երկկողմ կրոնական կապերը:

Թուրքական կառավարությունը բավական հետևողական է թուրք մտավորականության պատմագիտական փորձերին՝ կովկասյան ժողովուրդների պատմամշակութային, ազգագրական նկարագրին թյուրքական ծագում ու արմատներ վերագրելու հարցում: Բավական հաճախակի են դարձել թուրք գիտնականների ու պատմաբանների կողմից իրականացվող հետազոտությունները, որտեղ փորձեր են կատարվում ազգային-կրոնական ինքնության նույնականացման տարրեր ու կապեր տեսնել թուրքերի և այլոց միջև: Պատմագիտական իրողությունների խեղաթյուրման փորձ էր և Թուրքիայի Սաքարիա համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Քննարկման նյութեր» գիտական հոդվածաշարում դոցենտ Ալաէդդին Յալչընքայայի «Կովկասի թյուրքական ցեղերը. չերքեզներ, աբխազներ, կաբարդիններ, ադիգեյներ, չեչեններ, ինգուշներ, դաղստանցիներ և այլն» խորագրով 2005 թ. մարտին լույս տեսած հոդվածը: Հեղինակի խոսքերով, «Կովկասում ու Բալկաններում կան էթնիկ խմբեր, որոնք թեև արմատով թյուրքեր չեն, սակայն որպես մահմեդական՝ իրենց ապագան կապում են Թուրքիայի հետ ու ազգությամբ թյուրք ժողովուրդներից ավելի շատ են կապված Թուրքիայի հետ, ինչպես, օրինակ, չերքեզները, չեչենները, բոսնիացիները»:

Մշակութային ազդեցությունից զատ, պաշտոնական Անկարան զգալի կարևորություն է տալիս Աբխազիայում թուրքական տնտեսական կապի տալի հաստատմանն ու զարգացմանը: Աբխազիայում թուրք անհատ գործարարների ու ընկերությունների գործունեությունը էապես ակտիվացավ հատկապես վերջին տասնամյակում: Դրանց մի հատվածը կենտրոնացած է երկրի ածխի արդյունահանման ու վերամշակման ոլորտում՝ համաձայն երկկողմ ստորագրված պայմանագրերի: Առավել ակտիվ է Թքվարչելիի «Թամսաշ» թուրքական ածխարդյունահանման ընկերությունը, որն այս բնագավառում տարբեր հաշվարկներով

The breakaway republics of Abkhazia, South Ossetia and Nagorno-Karabakh within the Caucasus region (after August 2008)



արդեն ներդրել է շուրջ $25 մլն.: Աբխազիայում թուրքական ընկերություններն ակտիվորեն ներգրավված են նաև տնտեսության այնպիսի եկամտաբեր ճյուղերում, ինչպիսիք են զբոսաշրջությունն ու անշարժ գույքի շուկան: Ոչ պաշտոնական տվյալներով, վերջին կես տասնամյակում էապես մեծացել է թուրք այն գործարարների քանակը, որոնք Աբխազիայում կառուցում են բնակելի շինություններ, հյուրանոցներ, վարձակալում հողատարածքներ: Թուրք գործարարներից ոմանք Սուխումի կենտրոնական շրջաններում գնել են հողատարածքներ և կառուցել սրճարաններ, առևտրի տարբեր կենտրոններ:

Թուրք-աբխազական կապերի ամրապնդման գործում զգալի է նաև թուրքաբնակ աբխազական համայնքի դերն ու նշանակությունը (հաշվվում է շուրջ 500 հազար): Վերջին շրջանում թուրքաբնակ աբխազական համայնքի ներկայացուցիչներից շատերն են ցանկություն հայտնում հայրենադարձվել Աբխազիա: Թեև ներկայում թուրքաբնակ աբխազների հայրենադարձության գործընթացը զանգվածային բնույթ չունի, սակայն զարգացման միտում է ցուցադրում, ինչով առաջին հերթին շահագրգռված է պաշտոնական Անկարան: Հայրենադարձված աբխազների մի մասը Աբխազիայում զբաղվում է գործարարությամբ, թուրք-աբխազական տնտեսական կապերի ամրապնդման ուղղությամբ, ինչպես նաև այնպիսի կարևոր ոլորտում, ինչպիսին է երկրի կրթական համակարգը: Ոչ պաշտոնական տվյալներով, վերջին շրջանում հայրենադարձներից ոմանք, անհատական նախաձեռնությամբ, Աբխազիայում հիմնել են թուրքական միջնակարգ ուսհաստատություններ, որոնք քաղաքական ու ֆինանսական աջակցություն են ստանում Թուրքիայի կառավարությունից: 1990-ականների կեսերից Գագրայի շրջանում գործում է հայտնի «Բաշարան» կրոնական (իսլամական) քոլեջը, որտեղ ուսուցումը հիմնականում կազմակերպվում է թուրքերեն՝ անվճար հիմունքներով, իսկ կրթական ծրագրերում դրսևորվում են պանիսլամական գաղափարաբանության տարրեր: Քոլեջը ձևավորվել է 1994 թ.-ից՝ թուրքական առևտրա-լուսավորչական «Չորում» ընկերության և Աբխազիայի կրթության նախարարության միջև ստորագրված պայմանագրի հիման վրա, որը նախատեսում է գործել 36 տարի: Քոլեջի շրջանավարտներին հնարավորություն է տրվում կրթությունը շարունակել Թուրքիայի, Եգիպտոսի, Սիրիայի և այլ երկրների կրթօջախներում: Նշենք նաև, որ թուրքաբնակ աբխազական համայնքը զգալիորեն համագործակցում է Աբխազիայի իսլամադավան բնակչության հետ տարբեր ասպարեզներում:

Թուրքաբնակ աբխազական համայնքի առկայությունը մեծապես կարևորվում է նաև Աբխազիայի ղեկավարության կողմից: Տեղի աբխազների (և այլ աբխազական համայնքների) հայրենադարձության գործում զգալի է Աբխազ-աբազին (աբազա) ժողովրդի միջազգային ասոցիացիայի ունեցած դերակատարումը, ինչը ամրագրված է ասոցիացիայի՝ 1992թ. հոկտ. 9-ին ընդունված կանոնադրությունում: Հայտնի է, որ թուրքաբնակ աբխազական համայնքը հանդիսանում է ողջ աշխարհում աբխազների խոշորագույն համայնքներից մեկը, ուստի ասոցիացիան իր գործունեությունում զգալի տեղ է հատկացնում նախ և առաջ Թուրքիայի աբխազ սփյուռքին: Ոչ պաշտոնական տվյալներով, Աբխազիայի խորհրդարանում ներկայացված են պատգամավորներ, որոնք ակտիվ աջակցություն են ցուցաբերում թուրքաբնակ աբխազական համայնքի ներկայացուցիչների հայրենադարձության խնդիրներին. մասնավորաբար նշվում է ոմն Սոներ Գոգուայի անունը, որը հանդիսանում է Թուրքիայի քաղաքացի: Թուրքիայում ակտիվ գործունեություն է ծավալում Աբխազիայի համերաշխության կովկասյան կոմիտեն, որը զբաղվում է տեղի աբխազ համայնքի հիմնախնդիրներով, պաշտպանում Աբխազիայի շահերը Թուրքիայի ղեկավարության բարձրաստիճան շրջանակներում:

Աբխազիայում թուրքական մշակութային, տնտեսական ազդեցության տարածմանը զուգահեռ, պաշտոնական Անկարան խիստ հետևողական քաղաքականություն է վարում աբխազական ուղղությամբ Թուրքիայի քաղաքական լծակների հաստատման ու տարածման գործընթացում: Աբխազիայում Թուրքիայի քաղաքական ներկայության տարածմանը մեծապես նպաստել են Աբխազիայի շուրջ ստեղծված միջազգային ու տարածաշրջանային զարգացումներն ու ռազմաքաղաքական միտումները: Մասնավորաբար 1990-ականների սկզբներին, վրաց-աբխազական ռազմա-

կան հակամարտությունից հետո, պաշտոնական Թբիլիսին, չկարողանալով ուղիղ երկխոսություն սկսել աբխազական կողմի հետ, փորձեց հակամարտության միջազգայնացման գործում, ի հակակշիռ Կրեմլի, ներգրավել նախ և առաջ թուրքական կողմին, ինչից և մեծապես օգտվեց պաշտոնական Անկարան: Աբխազիայում թուրքական գործոնի ակտիվացման հարցում էական նշանակություն ունեցավ նաև 2003 թ. Վրաստանում տեղի ունեցած «վարդերի հեղափոխությունը», ինչը վրաց-աբխազական հիմնախնդրի կարգավորման համատեքստում հանգեցրեց ռուս-վրացական հարաբերությունների լարվածության խորացմանը և հնարավորությունների նոր դաշտ բացեց թուրքական միջամտության ընդլայնման հարցում:

Ինչպես նկատում են փորձագետներից շատերը, 2008 թ. վրաց-հարավօսական օգոստոսյան պատերազմից հետո ՌԴ կողմից Հարավային Օսիայի ու Աբխազիայի անկախության ճանաչմամբ, Հարավային Կովկասում անհամեմատ ընդլայնվեցին ու ամրապնդվեցին պաշտոնական Մոսկվայի դիրքերը: Իհարկե, ՌԴ կողմից երկու չճանաչված հանրապետությունների անկախության ճանաչումը վկայում է տարածաշրջանում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ազդեցության որոշակի թուլացման և Կրեմլի դիրքերի ամրապնդման մասին՝ մանավանդ օգոստոսյան պատերազմում վրացական կողմի կրած պարտության ֆոնի վրա: Սակայն դա միայն առաջին հայացքից. վերլուծաբաններից քչերը նկատեցին, որ պատերազմով հարավկովկասյան տարածաշրջանում ընթացիկ ռազմաքաղաքական զարգացումներում ներգրավման լուրջ հայտ ներկայացրեց առաջին հերթին հարևան Թուրքիան: Պատահական չէր Թուրքիայի կողմից «Կայունության ու համագործակցության կովկասյան պլատֆորմ» նախաձեռնության առաջադրումը հենց այդ ժամանակաշրջանում: Հատկապես միջնաժամկետ ու երկարաժամկետ տեսլականով Աբխազիայի անկախության ճանաչումով պաշտոնական Մոսկվան փաստորեն «օտարեց» իրենից Աբխազիան՝ նպաստելով Աբխազիայի միջազգայնացման գործընթացի ակտիվացմանը և դրանում այլ ուժային կենտրոնների՝ առաջին հերթին Թուրքիայի ներգրավմանը:

Վերջին տարիներին Աբխազիայում թուրքական քաղաքական ակտիվացման գործընթացը, սակայն, պայմանավորված չէ զուտ 2008 թ. վրաց-հարավօսական ռազմական գործողություններով: Այդ ժամանակաշրջանում Աբխազիայում թուրքական գործոնի կտրուկ ակտիվացման գործընթացը զարգացավ ռուս-վրացական հարաբերություններում օրեցօր խորացող լարվածության ու երկխոսության բացառման մթնոլորտին զուգահեռ և այդ ֆոնի վրա: Աբխազիայի իշխանություններն, իրենց հերթին, ՌԴ հետ ռազմավարական հարաբերությունների ամրապնդման հետ մեկտեղ, երկրի արտաքին քաղաքականության գերակայություններում շարունակում են առաջնակարգ նշանակություն տալ հանրապետության պետականության կայացման ու միջազգայնացման գործընթացին, ինչին կարող է նպաստել նաև թուրքական գործոնը: Բավական խորհրդանշական էր Աբխազիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի թուրքական հատվածի անկախության ճանաչման շուրջ շրջանառության դրված լուրերը, որոնց հետևեց 2008 թ. հունվարին Հյուսիսային Կիպրոսի թուրքական հատված Աբխազիայի առաջին պետական պատվիրակության այցը՝ երկրի ԱԳ նախարար Մաքսիմ Գվինջիայի գլխավորությամբ: Այցելության ընթացքում աբխազական կողմն իր շահագրգռվածությունը հայտնեց Հյուսիսային Կիպրոսի թուրքական հատվածի հետ տնտեսական ու մշակութային կապերի հաստատման հարցում: Նշենք, որ աբխազական կողմը պատրաստակամություն հայտնեց նաև այդտեղ իր երկրի պաշտոնական ներկայացուցչություն բացելու հարցում:

Առանձնահատուկ կարևորություն պետք է տալ 2009 թ. սեպտեմբերի սկզբներին Վրաստան այցելած Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի հայտարարությանը, ըստ որի «թուրքական կողմը կանի հնարավորինս Կովկասում առկա հակամարտությունների խաղաղ կարգավորման համար»: Վերջինս հավաստիացրեց, որ հարցի կապակցությամբ թուրքական կողմն իր դիրքորոշումը կհայտնի նաև Թուրքիայի փոխարտգործնախարարի մակարդակով, Աբխազիա այցի ընթացքում: Աբխազիայի՝ որպես միջազգային իրավահավասար սուբյեկտի հետ փոխհամագործակցության հաստատման Թուրքիայի մտադրությունը կասկածանքով ու դժգոհությամբ ընդունեց պաշտոնական Թբիլիսին: Արդյունքում՝ Աբխազիա այցելեց Թուրքիայի արտգործնախարարի

օգնականի տեղակալ Ունալ Չեփիքոզը, որը հանդիպում ունեցավ Աբխազիայի արտգործնախարարի հետ:

Գագաուզիայի ինքնավարություն

1994 թ. հանրաքվեի հիման վրա Գագաուզիան հանդիսանում է ինքնավարություն Մոլդովայի կազմում (Մոլդովայի հարավային շրջան): Գագաուզական ինքնավարության բնակչությունը հաշվվում է շուրջ 153-155 հազ. մարդ, որի ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 84%-ը, կազմում են գագաուզները: Գագաուզիայի ինքնավարությունում բնակչությունը հաղորդակցվում է հիմնականում երկու լեզվով՝ գագաուզերենով (թուրքերենին մոտ լեզու է, այլ մասնագետների կարծիքով՝ թուրքական բարբառներից մեկն է) ու ռուսերենով: Գագաուզիայի ինքնավարության ղեկավարը, ինքնավարության իրավական հատուկ կարգավիճակի մասին օրենքի համաձայն, հանդիսանում է Գագաուզիայի բարձրագույն պաշտոնյան՝ բաշքանը, որն ընտրվում է 4 տարին մեկ անգամ և հանդիսանում է Մոլդովայի կառավարության անդամ: Ինքնավարության բարձրագույն ներկայացուցչական մարմինը Գագաուզիայի Ժողովրդական խորհուրդն է, որը բաղկացած է 35 պատգամավորներից, որոնք նույնպես ընտրվում են 4 տարի ժամկետով: Ինքնավարության գործադիր բարձրագույն իշխանությունը հանդիսանում է Գագաուզիայի Գործադիր կոմիտեն:

Գագաուզիայում թուրքական գործոնն ակտիվացավ հատկապես խորհրդային կարգերի փլուզումից անմիջապես հետո: Գագաուզները, որոնք իրենց համարում են թյուրքական ժողովուրդ, սակայն ուղղափառ քրիստոնյաներ են, ինքնավարության ստեղծման ժամանակներից ի վեր բավական դրական են մոտենում Թուրքիայի հետ շփումների հաստատմանն ու զարգացմանը: Գագաուզիայի ինքնավարության հետ Թուրքիայի քաղաքական հարաբերությունների հաստատմանը զգալիորեն նպաստեց 1990-ականների սկզբներին Մոլդովայի ղեկավարության հետ Գագաուզիայի ազգային առաջնորդների հարաբերությունների սրացումը՝ կապված Գագաուզիայի անկախացման քաղաքական կողմնորոշումների հետ: Մոլդովական զարգացումները, մյուս կողմից, գտնվելով

Արևմուտքի ու ՌԴ փոխհարաբերությունների կիզակետում՝ կապված Մերձդնեստրի հակամարտության հետ, նույնպես հավելյալ խթան հանդիսացան տեղեկատվական դաշտից գագաուզական խնդրի դուրսմղման համար, ինչից և օգտվեց թուրքական կողմը: Պաշտոնական Անկարան ակտիվորեն ներգրավված է Գագաուզիայի ինքնավարությունից ռուսական ազդեցության թուլացման գործընթացում՝ ձգտելով ազդել ինքնավարությունում ընթացող սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացումների վրա:

Խորհրդային կարգերի փլուզմամբ գագաուզների շրջանում սկսված ազգային շարժումը քաղաքական աջակցություն ստացավ պաշտոնական Անկարայի կողմից: 1994 թ. Գագաուզիայի ինքնավարության ձևավորումից հետո Թուրքիայի կառավարությունը մեկ անգամ չէ, որ Մոլդովայի հետ բանակցությունների ընթացքում կոչ է արել վերջինիս առավել հանդուրժողական մոտեցումներ ցուցաբերել գագաուզների նկատմամբ ու չսահմանափակել գագաուզական ինքնավարության բնակչության իրավունքները:

Մինչև վերջին տասնամյակը թուրքական կողմը, ինքնավարության ներքաղաքական զարգացումներում, իր ազդեցության հաստատման հարցում հանդիպում էր որոշակի խնդիրների՝ կապված տեղի ղեկավարության քաղաքական կողմնորոշումների հետ: Մինչև 1999 թ. ինքնավարության ղեկավարությունը ամբողջությամբ ուներ մոլդովամետ դիրքորոշումներ, իսկ 1999 թ. հետո ընտրված ռուսամետ բաշքանի ղեկավարության շրջանում ինքնավարությունը գտնվում էր պաշտոնական

Քիշնևի հետ լարված հարաբերություններում՝ ընդհուպ մինչև 2002 թ.: Վերջին ժամանակներում ինքնավարության ղեկավարությունը սկսեց բացահայտորեն ակտիվացնել համագործակցությունը թուրքական կողմի հետ: Ինքնավարության բաշքան Միխայիլ Ֆորմուզալը հանդիսանում է «Միասնական Գագաուզիա» հասարակական շարժման ղեկավարը, որը հայտնի է իր արևմտամետ ու թուրքամետ քաղաքական դիրքորոշումներով:

1995 թ. Թուրքիայից Գագաուզիայի ինքնավարություն ուղարկվեց առաջին թուրքական պատվիրակություններից մեկը, որի շարքում էին հասարակական-քաղաքական գործիչներ, մշակույթի ու գործարար միջավայրի ներկայացուցիչներ: Այդ նույն տարում, ինքնավարության մայրաքաղաք Կոմրատում, հիմնվեց թուրք-գագաուզական բարեկամության ընկերություն, որն ակտիվ համագործակցության մեջ է գտնվում «Համագործակցության ու զարգացման թուրքական գլխավոր վարչության» հետ: Վարչությունը հանդիսանում է թյուրք ժողովուրդների շրջանում Անկարայի դիրքերի ամրապնդման կարևորագույն ինստիտուտներից մեկը, աջակցում է Թուրքիայի պանթյուրքական գաղափարների տարածմանը: Վարչությունն ակտիվ ներգրավվածություն ունի ինքնավարության սոցիալ-տնտեսական ու կրթական ոլորտներում: Վարչության ֆինանսական աջակցությամբ Գագաուզիայում ստեղծվել են մի քանի թուրքական, թուրք-մոլդովական վարժարաններ: Ոչ պաշտոնական տվյալներով, յուրաքանչյուր տարի Գագաուզիայի ինքնավարությունից Թուրքիայի բուհեր են ընդունվում 60 ուսանողներ, որոնք հիմնականում սովորում են նշյալ թուրքական վարչության ֆինանսական աջակցությամբ: 2007 թ. դրությամբ թուրքական բարձրագույն ուսհաստատությունների գագաուզ շրջանավարտների քանակը կազմում է մի քանի հարյուր ուսանող: Վերջին շրջանում բացվեց նաև մոլդովա-թուրքական Չադիր-Լունգայի վարժարանը, որի շրջանավարտները նույնպես հնարավորություն ունեն ուսումը շարունակելու թուրքական բարձրագույն ուսհաստատություններում:

Վարչության միջոցներով են ինքնավարությունում իրականացվել հսկայածավալ ասֆալտապատման աշխատանքներ, բացվել Աթաթուրքի անվան գրադարան Մոլդովայում, իսկ Կոմրատում՝ Թուրքական մշակութային կենտրոն: 2009 թ. Թուրքիայի աջակցությամբ իրականացվեց Չադիր-Լունգա քաղաքի ջրամատակարարման խոշոր ծրագիրը:

2009 թ. ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ինքնավարությունը Թուրքիայից ստացավ ժամանակակից բժշկական սարքավորումներ, որոնք արդեն տեղադրվել են և օգտագործվում են ինքնավարության երեք քաղաքների հիվանդանոցներում ու ախտորոշման կենտրոններում (2009 թ. հոկտեմբեր): Թուրքիայի առողջապահության նախարարության հետ ձեռք բերված համաձայնության հիման վրա նախատեսվում է 17 գագաուզ բժիշկների վերապատրաստման գործուղում Թուրքիա:

Բացի այդ, Թուրքիայի կառավարության անմիջական նախաձեռնությամբ ու աջակցությամբ գագաուզական ինքնավարությունը սոցիալ-հասարակական, քաղաքական շփումներ է հաստատել ու համագործակցում է Հյուսիսային Կիպրոսի թուրքական հատվածի հետ, որտեղ անցկացվող տարբեր միջոցառումներին հրավիրված գագաուզական պատվիրակությունների ֆինանսավորումը նույնպես կատարվում է հիմնականում թուրքական կողմի հաշվին: Պաշտոնական Անկարան տարբեր թյուրքական միջոցառումներին խրախուսում է այլ թյուրք ժողովուրդներին աջակցելու Գագաուզիայի ինքնավարությանը, իսկ վերջինս իր հերթին նույնպես ակտիվ մասնակցություն է ցուցաբերում՝ որպես լիիրավ անդամ:

2009 թ. օգոստոսի 18-19-ը Գագաուզիայի ինքնավարությունում տեղի ունեցան Գագաուզների համաշխարհային երկրորդ կոնգրեսի աշխատանքները, որին մասնակցություն էին ցուցաբերում 16 երկրներից ժամանած պատվիրակություններ՝ գագաուզ սփյուռքի ներկայացուցիչներ, հյուրեր Ռուսաստանից, Ուկրաինայից, Ղրիմի թաթարական մեջլիսից, Թուրքիայից, Հյուսիսային Կիպրոսի թուրքական հատվածից, Ադրբեջանից և այլ երկրներից: Կոնգրեսը ընդունեց որոշում՝ առաջարկել «թյուրք ժողովուրդների բուհերին ստեղծել Թյուրքական աշխարհի բուհերի ասոցիացիա»:

Նկատենք, որ վերջին տարիներին ակտիվացել են նաև գագաուզա-ադրբեջանական տնտեսական փոխհարաբերությունները: Գագաուզական կողմը կոչ է արել ադրբեջանցի գործարարներին

Ղրիմի Ս. Խաչ եկեղեցին

ներդրումներ իրականացնել ինքնավարության տնտեսությունում: Ակտիվացել են աղրբեջանցի մշակութային ներկայացուցիչների, նկարիչների ու երիտասարդների այցելությունները ինքնավարություն:

Ղրիմի թաթարների խնդիրը

Պաշտոնական Անկարան հետևողական քաղաքականություն է վարում նաև Ղրիմի թաթարների (260 հազ., մեծ մասը սունի է) հարցում, որի ուղղությամբ սկսեց ակտիվացնել իր գործողությունները հատկապես խորհրդային կարգերի փլուզումից հետո: Ղրիմի թաթարների ուղղությամբ ակտիվ քաղաքականության իրականացումը հանդիսանում է Թուրքիայի արտաքին քաղաքականության ռազմավարության կարևորագույն գերակայություններից մեկը: Թուրքական կողմը մեկ անգամ չէ փորձել ուկրաինական կողմի հետ գալ այնպիսի մի փոխհամաձայնության, որը թույլ կտար ընդլայնել Ղրիմի թաթարների իրավունքները, տալ արտոնություններ՝ սկսելով մշակութային ինքնավարության ընձեռումից: Քիչ չեն եղել թուրքական կողմի փորձերը՝ հասնելու տեղի թաթարների համար տարածքային ինքնավարության՝ դեպի Սև ծով ելքով, ինչը չէր կարող հանդուրժել Ուկրաինայի ղեկավարությունը: 1991 թ. գարնանը Ուկրաինա այցելած Թուրքիայի նախկին նախագահ Օզալը երկկողմ հարաբերություններում բարձրացրեց Ղրիմի թաթարների հարցը, սակայն ուկրաինական կողմը պատրաստակամություն հայտնեց հարցը քննարկել հեռանկարում: Թուրքիան ակտիվորեն փորձում է Ղրիմի թաթարների հիմնախնդիրը կարգավորել հօգուտ իր շահերի՝ օգտագործելով ռուս-ուկրաինական լարված հարաբերությունները և ներկայանալով որպես Ուկրաինայի հուսալի գործընկեր:

Բավականին խորհրդանշական էր 2006 թ. դեկտեմբերի վերջերին Ղրիմի ինքնավարություն Թուրքիայի հերթական պաշտոնական պատվիրակության այցելությունը՝ նախարարի գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Թուրքիայի ու Ղրիմի ինքնավարության միջև համագործակցության հարցերը հումանիտար և առևտրա-տնտեսական ոլորտներում: Ինքնավարության ղեկավարությունը իր շնորհակալությունը հայտնեց թուրքական կողմին Ղրիմի հեռավոր շրջաններում երեք թաթարական հանրակրթական դպրոցների վերանորոգման աշխատանքներին ցուցաբերած աջակցության համար: Թուրքական կողմն իր հերթին հանդես եկավ «Համագործակցության ու զարգացման թուրքական գլխավոր վարչության» ծրագրերի շրջանակներում այլ սոցիալ-տնտեսական նախագծերի իրականացմանն աջակցելու պատրաստակամությամբ: Հանդիպման ընթացքում թուրքական կողմն առաջարկեց Ղրիմի ինքնավարությունում բացել գործարարֆորում, որտեղ մասնակցություն կունենային Թուրքիայի ու Ուկրաինայի առաջատար գործարարները՝ համատեղ ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով (առաջին հերթին՝ զբոսաշրջության ոլորտում): Թուրքերը շահագրգռվածություն հայտնեցին նաև ֆինանսական միջոցներ ներդնել ինքնավարության բանկային համակարգում:

2007 թ. հունվարին Թուրքիա այցելեց Ուկրաինայի նախկին վարչապետ Վիկտոր Յանուկովիչը. այցի ընթացքում անդրադարձ եղավ նաև Ղրիմի թաթարների հիմնախնդրին: Թուրքական կողմը բավական դրական ընդունեց այն փոփոխությունները, որ տեղի էին ունեցել վերջին շրջանում ուկրաինական մոտեցումներում՝ հարցի կարգավորման ուղղությամբ. մասնավորաբար արդեն Ղրիմի թաթարների ներկայացուցիչը հանդիսանում է Ուկրաինայի խորհրդարանի անդամ: Յանուկովիչն իր հերթին հրավիրեց Թուրքիայի վարչապետ Էրդողանին Ուկրաինա, Ղրիմ: Նկատենք, որ Ուկրաի-

նայի նախորդ նախագահական ընտրություններին Ղրիմի թաթարները աջակցում էին Յուշչենկոյին, հակառակ տեղի մեծամասնություն կազմող սլավոն բնակչության, որն աջակցում էր Վ. Յանուկովիչին:

Թուրքական աջակցության հովանու ներքո Ղրիմի թաթարների տարածքային պահանջներն ու նկրտումները զգալիորեն սահմանափակվում են հատկապես տեղի բնակչության զգալի հատվածի ու տեղական իշխանությունների դիմադրության շնորհիվ: Տեղի սլավոնական բնակչությունը այնքան էլ չի վստահում թաթարներին, նրանց միջև բազմիցս են տեղի ունեցել առճակատումներ՝ քաղաքական, սոցիալ-մշակութային հենքի վրա:

Այլ հիմնահարցեր

Հարավկովկասյան ուղղությամբ պաշտոնական Անկարան հստակ ու հետևողական քաղաքականություն է իրականացնում նաև Աջարիայի ինքնավարության ուղղությամբ: Թուրքիայի կառավարությունը ֆինանսական ու քաղաքական աջակցություն է ցուցաբերում բոլոր այն թուրք գործարարներին, որոնք պատրաստակամություն են հայտնում զբաղվել գործարարությամբ Աջարիայի ինքնավարությունում: Տարբեր տվյալներով, ներկայում Աջարիայում ակտիվ գործունեություն են ծավալում թուրքական տարբեր բարեգործական ու գործարար ընկերություններ, որոնք ինքնավարության հարուստ շրջաններում գնում են բնակարաններ (հիմնականում հայերից), հյուրանոցներ: Թուրքական ընկերությունները մեծապես ներգրավված են Բաթումի զբոսաշրջիկության ոլորտում, ինչը հանդիսանում է ինքնավարության բյուջեի կարևորագույն եկամուտային աղբյուրներից մեկը: Թուրքիայի հետ Աջարիայի ինքնավարության տնտեսական շփումների ակտիվացմանը էապես նպաստում է ինքնավարության՝ Թուրքիայի հետ ունեցած ցամաքային սահմանի առկայությունը:

Թուրքական կառավարությունը Աջարիայի նկատմամբ իր հատուկ շահերի գոյության հանգամանքը հաստատեց դեռևս 2004 թ. աջարական ճգնաժամի շրջանում, երբ Վրաստանի գործող նախագահ Մ. Սահակաշվիլին փորձեց վերացնել Աջարիայի ինքնավարության կարգավիճակը, ինչն ամրագրված է 1921 թ. ընդունված Կարսի պայմանագրով: Այդ նախաձեռնությանը անմիջապես միջամտեց պաշտոնական Անկարան. այդ պայմանագրի համաձայն Թուրքիան Բաթումի նավահանգիստ ազատ ելումուտի իրավունք էր ստացել: Նախագահ Սահակաշվիլին ստիպված էր ետ կանգնել այդ մտքից, քանզի այն կարող էր հանգեցնել Թուրքիայի հետ միջազգային իրավաքաղաքական լուրջ հակամարտության:

Թուրքական կողմը շահագրգռված է նաև Վրաստան՝ մասնավորաբար Սամցխե-Ջավախքի շրջան թուրք-մեսխեթցիների հայրենադարձության հարցում: Թուրք-մեսխեթցիների հայրենադարձության խնդրի հետ կապված Վրաստանի իշխանությունները ստանձնել են միջազգային իրավական պարտավորություններ, սակայն մինչ օրս զգուշավորությամբ են մոտենում խնդրի հետագա զարգացմանը: Թուրքական կողմն իր հերթին էապես շահագրգռված է թուրք-մեսխեթցիների հայրենադարձության հարցում, ինչը կհանգեցնի Սամցխե-Ջավախք շրջանի ժողովրդագրական պատկերի կտրուկ փոփոխմանը՝ ի հաշիվ տեղի հայության:

Թուրքիայի ղեկավարությունը խորհրդային կարգերի փլուզման փուլից ի վեր շարունակում է երկակի ստանդարտներով առաջնորդվել արցախյան հակամարտության հարցում ու դրա կարգավորման գործընթացում: Ի տարբերություն հարավկովկասյան այլ՝ աբխազական ու հարավօսական հակամարտությունների, որտեղ պաշտոնական Անկարան, Վրաստանի հետ «ռազմավարական» հարաբերությունների զարգացման ֆոնի վրա, փաստացի աջակցում է այդ ժողովուրդների ինքնորոշման ու անկախացման գործընթացներին, արցախյան հիմնահարցի պարագայում առաջնորդվում է հակահայկական դիրքորոշումներով:



Մեծն Շահէն

Աշոտ Պետրոսեան

Արցախում Շահէն անունը տարածուած է եւ յարգի: Իր նախնական իմաստով այն նշանակում է բազէ: Անուան խորհուրդը էական է մարդու կեանքում եւ ներգործական նշանակութիւն ունի նրա բնաւորութեան եւ բախտի վրայ: Յամենայն դէպս Արցախում Շահէն անուամբ թոյլ մարդու չենք հանդիպել: Շահումեանում էլ Շահէնները մեծաթիւ էին եւ նրանց մի մասն ընդգրկուած էր ազատագրական պայքարի եւ պատերազմական գործողութիւնների մէջ: Եւ որպէսզի նրանց իրարից միանգամայն տարբերեն՝ անուանը կցել են այլ բնորոշիչ, ասենք՝ Շուն Շահէն, Կուճուր Շահէն, Մեծն Շահէն, Շահէն Սեյրանեան Զինաւորի: Թուարկեալ չորսից երեքը Գիւլիստանցի են, իսկ Շուն Շահէնը՝ Չայլուից: Երեքը զոհուած են, իսկ Շուն Շահէնին վերջերս հանդիպեցի «Եղնիկների» 17-րդ տարեդարձի օրը: Երբեմնի հիւրսով որսորդը եւ կտրիճ հետախոյզը ներկայումս բնակւում է Մաղաղիսում եւ պարապում է երկրագործութեամբ:

Շահէն Մեղրեանի մօրաքրոջ որդին՝ Շահէն Սեյրանեանը զոհուել է 1993 թուականի մայիսի 20-ին, Մեծ Շահէնից մէկ ամիս յետոյ: Նա տակաւին երիտասարդ էր եւ չէր



Շահէն Մեղրեան

հասցրել ամուսնանալ: Կուճուր Շահէնը Մեծ Շահէնի համեմատութեամբ փոքրամարմին չէր, տարիքով էր փոքր եւ գործունէութեամբ, ուստի Մեծ Շահէնին աւելի ճիշտ է անուանել Մեծն Շահէն: Գրաբարեան այս ձեւը միտքը երկրից բարձրացնում է դէպի երկինք: Մեր խօսքը պիտի լինի Մեծն Շահէնի մասին, սակայն աւելացնենք, որ Կուճուր Շահէնը կամ գեներալ Շահէն Յովասափեանը զոհուեց մի քանի տարի առաջ: Նշանաւոր այրերից նա եղբայրասպանութեան վերջին զոհն է: Հայի պատուէրով եւ հայի ձեռքով նա սպանուեց ցերեկ օրով:

Արթուր Մկրտչեանի հետ միասին Շահէն Մեղրեանը ԼՂՀ ԳԽ նախագահի միւս արժանաւոր թեկնածուն էր Դաշնակցութիւնից, մարդ, որն ստացել էր հայեցի դաստիարակութիւն եւ կրթութիւն: Շահէնի ուսուցիչը նշանաւոր մանկավարժ Բէնիկ Ղուլեանն էր: Ինքը՝ Շահէնն իսկական մելիք էր, այսինքն՝ թագաւոր: Եւ պատահական չէ, որ Դաշնակցութեան մէջ բոլոր թեկնածուներից շուտով առանձնացաւ այս անունը, եւ Գերագոյն Խորհրդի նախագահութեան ընտրութիւններին նրա թեկնածութեանը երկրորդ անգամ իրենց համաձայնութիւնը տուեցին նրա բոլոր ընկերները:

Մենք բազմիցս առիթ ենք ունեցել բնութագրելու Շահումեանի առաջնորդին: Արդ, կ'ուզենայինք ընդգծել այլ հանգամանք. Շահէն Մեղրեանն իբրեւ ռազմաքաղաքական առաջնորդ եւ կազմակերպիչ ճանաչման է արժանացել շատ-շատերի կողմից, եւ նրա մարդկային յատկանիշները եւս համապատասխան էին նման պաշտօնավարութեանը: Շահէնի մելիքութիւնն արտայայտւում էր ոչ այնքան իբրեւ սոցիալական կարգավիճակ, որքան որպէս հոգեբարոյական մակարդակ: Շահէնի առաւելութիւնը զգում էին նաեւ իր քաղաքական հակառակորդները, որոնք կենտրոնացած էին ՀՀՇ կուսակցութեան մէջ եւ պարզ է, որ որքան բարոյապէս եւ իմացականօրէն բարձր լինէր իրենց հակառակորդը, այնքան նա անընդունելի պիտի լինէր: Այսպիսին է քաղաքական պայքարի բնոյթը, ասպարէզ, որտեղ պայքարող կողմերը հակադիր դիրքորոշումներ են ունենում գրեթէ բոլոր կարեւոր հարցերում: Վազգէն Մանուկեանն էլ Շահէն Մեղրեանին բնութագրել է որպէս միջնադարեան ֆէոդալ, այսինքն անձ, ով շատ հեռու է ժողովրդավարութիւնից: Հիմա Վազգէն Մանուկեանը թող հայեացք նետի իր շրջապատին եւ կը տեսնի, թէ ովքեր են իսկական ֆէոդալները: Սա՝ ի մէջ այլոց:

Ճիշտ է, մարգարէն իր բնակավայրում չի ընդունւում որպէս այդպիսին, սակայն Շահէնի պարագան այլ էր: Շահումեանում նրա հեղինակութիւնն անառարկելի էր եւ անտարակուսելի:

Ազատագրական պայքարի հետ միասին ասպարէզ մտան քաղաքական մի շարք գործիչներ, որոնք նոր ժամանակաշրջանի ծնունդ էին, եւ

նրանք վերցրին իշխանութիւնը: Շահէն Մեղրեանը Հայաստանի քաղաքական բոլոր գործիչներից, հներից եւ նորերից տարբերւում էր նրանով, որ ոչ թէ հոսող գետի ափերից մէկի վրայ էր յայտնուել, այլ, որպէս կամարապինդ կամուրջ, երկու ափերը կապում էր իրար: Նա ժամանակները միաւորող յաւիտենական հայն է, որն իր էութեամբ անփոփոխ է եւ իրենով մարմնաւորում է Հայոց մշտամնայուն արժէքների համակարգը: Սրանով էլ Շահէն Մեղրեանը բացառիկ ինքնատիպ անհատականութիւն էր:

Ուստի պատահական չէ, որ երբ ազատագրական պայքարն սկսուեց, Շահէն Մեղրեանը միանգամայն հասուն մարդ էր՝ իր աշխարհայեացքով, կենսուժով եւ յատկապէս մարդկայնութեամբ: Նա արժանիօրէն վայելում էր մեծ հեղինակութիւն: Որո՞նք էին Շահէնի հմայքի գաղտնիքները: Դրանք շատ պարզ էին: Նա ունէր մարդկանց հետ խօսելու կարողութիւն, ունէր անդրաթափանց միտք. մարդու երեսին կը նայէր, եւ անմիջապէս հասկանում էր, թէ նրա հետ ինչի մասին եւ ինչպէս պիտի խօսի: Դա Շահէնի մարդաճանաչման խորքային ինտուիցիան էր, որ նրան տրուած էր որպէս բնական կամ աստուածատուր շնորհ: Բացի այդ, ունէր մեծ կենսափորձ, որը ձեռք էր բերել գործնական շփումներից եւ քննարկուող հարցերի բոյլի մէջ միանգամից շօշափում էր լուծելիք խնդրի սիրտը: Դա առաւելութիւն է ղեկավար անձի համար: Շահումեանն իր սոցիալ-գիտակցական մակարդակով, որպէս իրարից բաւականին տարբերուող տոհմերի, շրջանների եւ մարդատեսակների ասպարէզ, ի մի էր հաւաքել զանազան վայրերից ամենատարբեր խառնուածքի եւ բնաւորութեան, սովորոյթների եւ պահանջմունքների տէր մարդկանց՝ տեղիս բնակիչներ, որոնք շատ լաւ էին ճանաչում Շահէնին, Հայաստանի տարբեր շրջաններից եկած մարդիկ եւ սփիւռքահայեր: Այսպիսի բազմազանութեանը միասնական մէկ նպատակով նոյն գործունէութեան մղելը դժուարին գործ է, մանաւանդ, որ մէկ անձի ղեկավարութեան տակ էին առնուած տնտեսական, քաղաքական, ռազմական ասպարէզները: Բոլորի հետ Շահէնը կարողանում էր անհրաժեշտ մակարդակով հաղորդուել: Չմոռանանք՝ պատերազմական դժուարագոյն պայման-

Շահումյան



ներ էին: Նրա առաւելութիւններից մէկը համակրանքի լայն դաշտն էր, որի մէջ կարող էին տեղաւորուել գրեթէ բոլորը. նա երեխայի հետ երեխայ էր, մեծի հետ՝ մեծ, թիկունքայինի հետ՝ թիկունքային, գրոհայինի հետ՝ գրոհային: Նա կազմակերպական տաղանդ ունէր, ղեկավարի ունակութիւն եւ ոչ մի բան երբէք ի միջի այլոց չէր անում, այլ հոգով էր անում: Ինչպէս ասում են, առողջ հոգի էր՝ առողջ մարմնի մէջ: Բոլորին բարեկամաբար էր վերաբերւում, սակայն առանձնակի յարգանքով էր լցուած սփիւռքահայ մարզիչների՝ Ծերունի, Սիմոնի, Խաժակի, Հարմիկի եւ այլոց նկատմամբ, որոնք նախաձեռնական շունչ եւ ոգի էին բերել հայրենի երկիր: Իբրեւ Վարդանանց ուխտի շառաւիղներ՝ նրանց գիտակցութեան մէջ հոգեւորը ներդաշնակօրէն համադրուած էր ռազմաքաղաքականի հետ եւ խորհրդային հարիւրամեակից աղաւաղուած մեր զգացմունքային դաշտը կարճ ընթացքում մաքրուեց հայոց յաւիտենական ոգու ազնիւ գործունէութեամբ: Նրանք գիտակցական կարգապահութեան սիրոյ օրէնքը հաստատեցին Շահումեանում, որտեղ տեղիս հզօր երիտասարդութիւնը կարծես միանգամից ուղղեց իր մէջքը, ոտքի ելաւ եւ ամրապինդ բերդի նման շըրջապատեց Շահէնին: Շուտով Շահէնի բանակի մէջ աչքի ընկան տեղացի մի խումբ երիտասարդներ, որոնք դարձան մարտական խմբերի հզօր հրամանատարներ՝ Յակոբ Խիդիրեանը, Նովիկ Գիլումեանը, Կամօ Յովհաննիսեանը, Շուրա Գզիրեանը, Սերգէյ Չալեանը, Վանիկ Լալայեանը:

Շահէնը եւ՛ բարեկամ էր, եւ՛ դիկտատոր, իր կամքը թելադրող: Եւ եթէ իր կամքը բարի չլինէր, եթէ իր ձեռքում այդքան լծակներ ունեցող մարդն իմաստութիւն չունենար, ամէն ինչ քաոսի կը վերածուէր: Իր շնորհալիութեամբ հանդերձ՝ Շահէն Մեղրեանը եթէ դաշնակցական չլինէր բառի բուն իմաստով, նա անկարող պիտի լինէր ղեկավարելու մարտնչող Շրջանը: Դաշնակցութիւնը, որպէս ազգային միաբանութեան տեսակ, համահունչ էր Շահէնի հոգեբանութեանը: Դաշնակցութեան մէջ էլ միաւորւում են ամենատարբեր խառնուածքի եւ բնաւորութեան մարդիկ, որոնց համար գերակայ են ազգային շահերն ու արժէքները: Եւ դաշնակցական հոգեբանութիւնը հնարաւորութիւն է տալիս ներդնելու հոգեկան եւ մարմնական կարողութիւններն առաջադրեալ գործի մէջ: Երկրորդ, Դաշնակցութիւնն ուներ մեծ հնարաւորութիւններ, համաշխարհական կապեր, որոնց շնորհիւ կարողացաւ պատերազմի առաջին տարիներին ինքնապաշտպանութեան կազմակերպման առումով հսկայական գործ կատարել:

Շահէն Մեղրեանն ամէն կերպ խուսափում էր «քաղաքական գործիչ» պիտակից, այնքան էլ բուռն մղումով չէր մասնակցում քաղաքական բնոյթի գործառոյթներին, սակայն, անկասկած, կայացել էր որպէս քաղաքական գործիչ, զի մանկութիւնից սովոր էր անել անհրաժեշտը, եւ ոչ թէ միայն հաճելին: Իրականութիւնը, կեանքը մի օրգանական ամբողջութիւն է եւ անհնար է այն տարրալուծել. քաղաքական գործընթացները ներհիւսեալ են ընդհանուր կեցութեան մնացեալ կողմերին եւ Շահէնը կամայ թէ ակամայ պիտի մտնէր քաղաքական ասպարէզ: Իգոր Մուրադեանի վկայութեամբ, Լէոնիդ Ազգալդեանը մի անգամ Շահէնին ասել է. «Հասկացի՛ր, դու ո՛չ միայն հրամանատար ես, այլեւ քաղաքական գործիչ, եւ պէտք է ապացուցես, Երեւանում բոլորին համոզես, որ այժմ աւելի հեշտ է պաշտպանել Շահումեանը, քան յետոյ ազատագրել»: Շահէնը կատարեց նաեւ այդ պահանջը: Իգոր Մուրադեանը Շահէնի վերաբերեալ մի հոգեբանական հետաքրքիր դիտարկում էլ է արել. «Շատերը շուտով համոզուեցին, որ նա քիչ ջանքեր չի ներդրել իր մէջ ճնշելու համար քաղաքական հաւակնութիւնները (ամբիցիա), ինչը պայմանաւորուած էր ոչ միայն Շահումեանի շրջանը, այլեւ ողջ Ղարաբաղը ղեկավարելու իր առաքելութեան գիտակցմամբ»:

Գուցէ տեղին չէ շեշտադրել Շահէն Մեղրեանի քաղաքական ամբիցիաների պահը, քանզի այդպիսիք նա, ըստ էութեան, չունէր, այլ նրա կեանքի գլխաւոր խնդիրը Շահումեանը թուրքի բռնատիրութիւնից ազատագրելն էր: Թէ ինչ ճանապարհով՝ դա այլ խնդիր է: Եթէ Շահէն Մեղրեանն հաւակնութիւններ ունենար, նա կարող էր ոչ միայն

Արցախի, այլեւ Հայաստանի ղեկավարը լինել: Հասկանալի է, այս պարագային նա պիտի փոխէր իր սոցիալ-քաղաքական դիրքորոշումները, դառնար ՀՀՇական:

Յայտնի փաստ է, որ Շահէն Մեղրեանն ուրախութիւն չի ապրել, երբ ԼՂՀ Գերագոյն Խորհրդի նախագահի պաշտօնում ընտրուելու համար իր թեկնածութիւնն է առաջադրուել: Ռուս լրագրող Անդրեյ Պրալնիկովը ռուսական թերթերից մէկում գրել է. «Դեռ մէկ տարի առաջ Մեղրեանն իրեն քաղաքական գործիչ չէր համարում: Նա իր գլխաւոր խնդիրն էր համարում Մոսկուայի հրամանով բանակի զաւթած եւ ադրբեջանցիներին յանձնած հայկական գիւղերի ազատագրումը: Բայց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակումից, որի կազմի մէջ մտաւ Շահումեանի շրջանը, եւ ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ Արթուր Մկրտչեանի մահից յետոյ համաձայնեց նոր ընտրութիւններին իր թեկնածութիւնը դնել: Հնարաւոր է, որ այդ պաշտօնը զբաղեցնելուն նրան խանգարեց «Դաշնակցութիւն» կուսակցութեանն իր անդամակցութիւնը, որը Հայաստանում այսօր իշխող ՀՀՇին ընդդիմադիր կուսակցութիւն է, բայց նա ամենալուրջ թեկնածուներից մէկն էր»:

Պատմական փորձը ցոյց է տալիս, որ Դաշնակցութեան ֆենոմէնն ատելի է «չափաւոր» հայեացքներ, նաեւ չափաւոր «հայրենասիրութիւն» ունեցող մարդկանց՝ քաղքենիներին, որոնց իրականում հետաքրքրում է միայն մի բան՝ իշխանական աթոռներ եւ անձնական ապահով կեցութիւն: Եւ անվարան կարելի է ասել, որ իսկապէս դաշնակցական լինելը խանգարեց Շահէնին ընտրուել նախագահ, եւ ոչ այնքան նրա բնածին աստուածային շնորհները, հոգեբանութեան գծերը: Դրանք էլ, անկասկած, ՀՀՇականների սրտով չէին, քանզի Շահէնի հոգեպատկերի վրայ տեսնում էին իրենց դիմագծի այլանդակութիւնը եւ նրանց թում էր, թէ այդ տգեղութեան պատճառը Շահէնի հոգու մաքուր հայելին է: Սակայն, կրկնում ենք, հոգեբանական վերոնշեալ առանձնայատկութիւններն այնքան դեր չունէին, որքան նրա կուսակցական պատկանելութիւնը, դաւանած արժէքների համակարգը եւ մշակութային միջավայրը:



Այնպէս որ, նոյն ատելութիւնը, նոյն դաժան վերաբերմունքը շարունակուեց Արցախի Գերագոյն Խորհրդի նախագահի թեկնածու առաջադրուած Շահէն Մեղրեանի նկատմամբ:

Հայաստանում ստեղծուած ներքաղաքական իրադրութիւնը հնարաւորութիւն չտուեց Շահէն Մեղրեանին դառնալու ԼՂՀ ԳԽ նախագահ, թէեւ նա ձայների քանակ էր ապահովել: Հակառակ դիրքերում գտնուողները ոչ մի բանի առջեւ չէին կանգնում՝ իրենց թեկնածուին անցկացնելու, սակայն մէկը չէր անցնում, միւսին էլ չէին թողնում:

Դրանից անմիջապէս յետոյ եղաւ Արցախեան պատերազմի ամենամեծ ողբերգութիւնը՝ խորհրդային բանակի կողմից Շահումեանի յանձնումը թուրքերին: Շահումեանի ինքնապաշտպանութեան զօրքը միայնակ չէր կարող խորհրդային կայսրութեան զինեալ ուժերի դէմ կռուել եւ խնդրուող օգնութիւնը Հայաստանի իշխանութիւններից այդպէս էլ չհասաւ Շահումեան: Մովսէս մարգարէի նման Շահէնն իր ժողովրդին ազատեց սրի բերանից եւ դուրս բերեց անվտանգ տարածք: Նա չէր կարող իր պատասխանատուութեան տակ եղած խաղաղ բնակիչներին յանձնել թուրքերի չեղեալ ողորմածութեանը:

Շահումեանն ընկաւ շահամոլութեան, եղբայրատեացութեան եւ քաղաքական հակու-

րութեան արդիւնքում: Քաղաքական լրբերը ողբերգական իրադարձութեան մեղաւոր հռչակեցին Շահէնին եւ Շահումեանցիներին: Նուիրեալ մարտիկներին զինաթափեցին, իսկ հնաբնիկ Շահումեանցիներին ցրիւ տուեցին աշխարհով մէկ:

Առանց արտայայտելու իր վիրաւորուածութիւնը, հայրենի երկրի կորստեան անհունցաւը զսպելով, նա յղացաւ ստեղծուած պայմաններում գործելու հանճարեղ մի գաղափար, ահասարսուռ մի ծրագիր, որը նման էր կենդանի մարտիրոսութեան. նա վճիռ կայացրեց հայդուկային (պարտիզանական) պայքարի եւ իր մի բուռ ընկերներով մտաւ թշնամու թիկունք: Շահէնը իր ժողովրդի կեանքը չէր կարող վտանգել, սակայն նա նոյն կերպ չվերաբերուեց ինքն իր նկատմամբ, այլ Տիրոջ նման գնաց դէպի դժոխք եւ նախ սասանեց թուրքերի տիրակալութիւնը Շահումեանում, եւ հողը սկսեց այրուել թշնամու ոտքերի տակ: Հայդուկները զգալի վնասներ էին հասցնում թշնամուն՝ խաբելով մի ամբողջ ռազմաճակատի եւ թիկունքի կապը: Նրանց ներկայութիւնը Շահումեանի անտառներում զգալիօրէն բարելաւեց Մարտակերտի մեր զօրամիաւորումների վիճակը: Բարեկամները հաճելի զարմանք ապրեցին, իսկ հակառակորդները ցնցուեցին անսպասելիութիւնից: Շահէն Մեղրեանը պահպանեց իր բոլոր կապերը եւ դաշնութեան ու բարի կամքի մարմնաւորողը եղաւ:

Բանսարկուների, խաբեբաների, իրենց մեղքն այլոց վրայ բարդողների, թշնամական ոտնձգումների դէմ ելաւ, կարճ ժամանակով եկաւ Երեւան եւ կազմակերպեց մամլոյ ասուլիս ու իր յստակ պարզաբանումներով եւ խորքային պատճառագիտութեամբ բացայայտեց 1992 թուականի Շահումեանի պարտութիւնը՝ բնորոշելով այն որպէս ռազմաքաղաքական: Առանց այլայլուելու, առանց կրքերի եւ թշնամութեան, անաչառ գիտականութեամբ, մէկը միւսի յետեւից ընդյատակից հանեց բոլոր այն հանգամանքները, որոնք նպաստել են մեր պարտութեանը եւ առաջին հերթին՝ խորհրդային իշխանութիւնների հետ Հայաստանի կառավարիչների անիմաստ հակադրութիւնը, որ պատրուակ դարձաւ խորհրդային զօրքերի համար՝ իբրեւ գործիք ծառայել թուրքերին: Բացայայտուեց հայրենական «իշխանների» դաւաճանական անտարբերութիւնը եւ անմարդկային անտեսումը Հայաստան աշխարհի մի երկրամասի կորըստեան նկատմամբ:

Աստիճանաբար բազմացան հայդուկ «Եղնիկները», որոնց դիւերսիոն առանձնակի գործողութիւնները շուտով վերաճեցին ամբողջական բնակավայրեր ազատագրելու ռազմավարութեան: «Եղնիկները» փայլուն կերպով իրականացրին Սարսանգի մերձափնեայ գիւղերի, Մաղաղիսի, Տօնաշէնի, Թալիշի, Հաթերքի, Գիւլիստանի ազատագրման գործողութիւնները: Նշանակալից է «Եղնիկների» զօրաւոր դերակատարութիւնը Քարվաճառի եւ Մարտակերտի ազատագրման գործում: Ռազմաճակատային գիծն աստիճանաբար մօտենում էր «Եղնիկների» ռազմակայանին, սակայն բարձրագոյն հրամանատարութեան ծրագրերի մէջ չկար Գիւլիստան գաւառի ազատագրումը: Քանի դեռ ողջ էր «Եղնիկների» հրամանատար Շահէն Մեղրեանը՝ օրակարգից պիտի չհանուէր Շահումեանի ազատագրման խնդիրը: Եւ ահա 1993 թուականի ապրիլի 17-ին տեղի ունեցաւ ուղղաթիռային աղէտը, եւ Շահէնն իր 12 զինակիցներով օդից երկինք բարձրացաւ:

Ու թէեւ Շահէնենց զոհուելուց յետոյ «Եղնիկները» շարունակեցին իրենց պայքարը, սակայն Շահումեանի ազատագրման խնդիրը տեղափոխուեց անորոշ ապագայ:

Հայդուկապետ Շահէն Մեղրեանը մեր բազմադարեան պատմութեան հերոսական կերպարներից է եւ միաժամանակ՝ Արցախեան պատերազմի ամենամեծ ողբերգութեան գործող անձը:

ԴՐՕՇԱԿ
100 տարի առաջ

№ 3—4 (211) XX ՏԱՐԻ ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ 1910

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse).

„ՀԵՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՄԻ ՄԵԾ ՇԱՐԺՄԱՆ ՍՏՈՒԵՐՆԵՐԸ

«Ժողովրդից» յետոյ՝ պրոլետարիատ...

Իդէալիզացիան, դասակարգային գաղափարականացումը շարունակուեց աւելի յախուռն, աւելի անզուսպ: Գործաւորների փոքրաթիւ դասը օժտուեց նոյն վիթխարի յատկութիւններով, նոյն միստիքական հմայքով, ինչպէս երբեմն «Ժողովուրդը»: Եւ ամեն ինչ այնուհետեւ շրջան արեց պրոլետարիատ-առանցքի շուրջը: Բոլոր յոյսերը կենտրոնացան նրա վրայ, միմիայն նրա վրայ:

Արդէն 1883-ին, իր անդրանիկ սոցիալ-դեմոկրատական բրոշիւրի մէջ- «Սոցիալիզմ եւ քաղաքական կռիւ»- ռուսաց մարքսիզմի պարագլուխը, Գէորգի Պլեխանով, այն միտքն էր արծարծում, թէ՝ «Բռնակալութեան դէմ յայտարարած կռիւը կարող է յաղթել միմիայն մէկ էական պայմանով՝ որ այդ կռիւը դառնայ դասակարգային ինքնաճանաչութեան հասած պրոլետարիատի շարժում»:

Մարքսիզմի տիրապետութեամբ՝ Ռուսաստանում կատարուեց մի այլ շրջումն մտքերի մէջ: Նոր հոսանքը սարսափով երես դարձրեց եւ կռուի այն մեթոդից, որ կազմել էր նախորդ հոսանքի- «Նարոդնայա Վոլիա»-ի տիեզերական հռչակը:

Ռուսաստանը իր լայնածաւալ փէշերի տակ առանց այն էլ շատ քիչ ունէր բուն գործօն, յեղափոխական կարողութիւն - նոր տիպի գործիչները հրաժարիմք ասացին դաւադրական գործունէութեան այն բոլոր արիւնոտ, յարձակողական ձեռնարկներին, առանց որոնց, տարաբախտաբար, չի կատարուել ազգերի յեղափոխութիւնը:

Հաւատը դեպի շարժման տարերայնութիւնը դեռ վառ էր նաեւ այդ սերնդի մէջ: Աւելի եւ: «Տարերայնութիւնը», այսպես ասած, կրկնապատկում էր: Մարքսիզմը իր «տնտեսական մատերիալիզմի» երկաթէ օրէնքներով, օբյեկտիվիզմի, առարկայականութեան իր տարամերժ դաւանանքով գալիս էր ուժեղացնելու տարերայնութեան ու «ճակատագրականութեան» վաղեմի հաւատը ռուս մտաւորականութեան մի խոշոր հատուածի մէջ:

Մարքսեան այդ երկաթէ դէտերմինիզմի ծոցում առհասարակ շատ քիչ տեղ է տրւում զուտ սուբյեկտիվ, ենթակայական գործօնին, այսինքն մարդ-ազդակներին, նրանց կամքին, ձեռներէցութեան եւ այլն: Այդ նոյն դետերմինիզմի հաւատամքը Ռուսաստան փոխադրուելով, թուլացրեց Լավրովների ու Միխայլովսկիների հռչակած սուբյեկտիվիզմը, մի թէորիա, որ միշտ ներքողել ու քաջալերել է մարդ-ազդակի, որպէս գիտակից էակի, խոշոր դերը պատմական վերիվայրումների մէջ, հանդէպ օբյեկտիվ, առարկայական գործօնների, հանդէպ պատմական «տարերային» պրոցէսի: Անհատը սոսկ ծառայ չէ, սոսկ հնազանդ սպասաւոր չէ «տարերային», «ճակատագրական պրոցէսների, այլեւ յաճախ տէր, հրամանատար: Անհատները, գործօն եւ կամքոտ խմբումները, յեղափոխական խիզախ, անվեհեր փոքրամասնութիւնները - ինչպէս յաճախ վկայում է ինքը պատմութիւնը - կարող են յղանալ եւ իրագործել հսկայական ծրագիրներ, կարող են ստեղծել նորանոր պա-հանջներ՝ ստրուկ ու խաւար ժողովուրդների մէջ, կարող են պատռել «ճակատագրական անցքերի» շղթան, քաշել իրենց ետքից զանգուածները, յեղաշրջել ու վերակազմել ամբողջ երկիրներ...

Օբյեկտիվ, տնտեսական ու այլ գործօնների կարեւորութիւնը ահագին է պատմական պրոցէսի աստիճանական զարգացման, անցքերի նախապատրաստութեան մէջ, բայց գիտակից մարդ-անհատն եւս իր հակազդող ու հրահրող, ստեղծագործող դերն ունի, որ պէտք է յար ու միշտ արծարծել, մանաւանդ խաւար ու յետամնաց միջավայրերում, վերանորոգման բարդ աշխատանքի համար կոչուած երիտասարդութեան մէջ:

Այդ դաւանանքն էր, որ այնքան ուժգին թափ էր հաղորդում «Նարոդնայա Վոլիա»-ի հերոսներին եւ նիւթում էր նրանց բազուկներով աշխարհաշառաչ սրխրագործութիւններ...

Հայտարարություն

Ապրիլի 22-ին հայ-թուրքական արձանագրություններին դեմ հանդես եկող քաղաքական եւ հասարակական կազմակերպությունների հավաքում ընդունվել է համատեղ հայտարարություն, որի ամբողջական տեքստը բերվում է ստորեւ:

Մենք՝ վերոհիշյալ արձանագրությունների կնքման դեմ համախմբված ուժերս, փաստում ենք, որ.
- ՀՀ Սահմանադրական դատարանը, անհամապատասխանության բոլոր հիմքերն ունենալով հանդերձ, Հայաստանի կողմից արձանագրություններով ստանձնվող պարտավորությունները, ցավոք, ճանաչեց Սահմանադրությանը համապատասխանող: Այդուհանդերձ, մինչ օրս մեր կողմից արտահայտված մտահոգությունների հիմնական մասն ամփոփվեց ՍԴ իրավական դիրքորոշումների մեջ: Ավելին՝ պարտադրվեց, որ «Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվող քայլերը՝ նախատեսվող պարտավորությունների ստանձնման եւ դրանց կատարումն անհրաժեշտ օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքներով ապահովելու ուղղությամբ, ներդաշնակ լինեն դատարանի որոշման մեջ ներկայացված իրավական դիրքորոշումներին եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին»:
- Ըստ էության, ՀՀ նախագահը, անտեսելով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը, արձանագրությունները ներկայացրեց Ազգային ժողովի վավերացմանը: Մինչդեռ ՀՀ նախագահը պարտավոր էր սահմանել վերապահումներ՝ ապահովելու համար ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ ամրագրված նվազագույն պահանջները:
- Իր հերթին, ՀՀ Ազգային ժողովը մերժեց «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքում համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկը, որով բարձրագույն օրենսդիր մարմինը փաստորեն կորցրեց իրավիճակը շտկելու հնարավորությունը:
Այդուհանդերձ, հայության արմատական շահերը վտանգող արձանագրությունների դեմ համահայկական պայքարը քայլ առ քայլ տալիս է շոշափելի արդյունքներ: Վերահաստատում ենք, որ մեր պայքարի նպատակը մնում է անփոփոխ.
- չվավերացնել արձանագրությունները այս տեսքով,
- վավերացնել միմիայն հետեւյալ վերապահումները՝ որպես արձանագրությունների անքակտելի մաս, դրանց կցելու դեպքում.
Հայաստանի Հանրապետությունը իրեն իրավունք է վերապահում եւ հայտարարում է.

1. «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններով Հայաստանի Հանրապետության հանձնառությունները Հայաստանի Հանարապետության կողմից ենթակա են կատարման բացառապես երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների առկայության եւ միաժամանակ՝ գործող սահմանի բաց լինելու դեպքում: Ընդ որում, արձանագրություններով ստանձնած պարտավորությունները Թուրքիայի Հանրապետության կողմից խախտելը, այդ թվում՝ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հրաժարվելը, գործող սահմանը չբացելը կամ արգելափակելը կամ արձանագրությունների առարկայի եւ նպատակների հետ անհամատեղելի գործունեություն իրականացնելը, նախապայմաններ առաջադրելը, արձանագրություններում նշված ողջամիտ ժամկետները չարաշահելը հիմք է նշված երկու արձանագրությունների գործողության՝ Հայաստանի Հանրապետության կողմից միակողմանիորեն եւ միաժամանակյա դադարեցման համար:
2. Արձանագրություններն ունեն բացառապես երկկողմանի միջպետական բնույթ ու չեն կարող վերաբերվել եւ տարաբնույթ հղումներով վերագրվել որեւէ երրորդ կողմի կամ վերջինիս հետ սույն արձանագրություններն ստորագրած կողմերի փոխհարաբերություններին: Այս հարաբերությունները որեւէ ձեւով չեն կարող առնչվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հետ, որն անկախ ու ինքնուրույն գործընթաց է:
3. Արձանագրությունները չեն կարող մեկնաբանվել եւ կիրառվել այն ձեւով, որով ուղղակի կամ անուղղակի կերպով քննարկման առարկա կարող է դառնալ Հայոց ցեղասպանության եւ հայ ժողովրդի հայրենազրկման փաստը, ինչպես նաեւ խոչընդոտվել Հայոց ցեղասպանության (գենոցիդի)՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործության, միջազգային ճանաչման, դատապարտման եւ հետեւանքների վերացման հարցերում Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի կողմից միջազգային իրավունքին համապատասխան ձեռնարկվող գործողությունները:
4. Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ ընդհանուր սահմանի բացման արձանագրություններով ամրագրված հանձնառությունը Հայաստանի Հանրապետությանը վերաբերելի է սահմանային անցակետերի բնականոն գործունեությունն իր կողմից ապահովելու հետ կապված իրավակազմակերպչական ու կառուցակարգային խնդիրները լուծելու մասով: Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ առկա սահմանների հարցը ենթակա է լուծման գերակա միջազգային իրավունքի համաձայն՝ երկու երկրների միջեւ կնքվելիք միջպետական պայմանագրով:
Ելնելով վերոհիշյալ հաստատումներից.
- ՀՀ նախագահից պահանջում ենք դադարեցնել արձանագրությունների կնքման գործընթացը՝ ետ կանչելով հայկական կողմի ստորագրությունները:
- Հակառակ դեպքում ՀՀ նախագահից եւ ՀՀ Ազգային ժողովից պահանջում ենք ՀՀ Սահմանադրությանը համապատասխան իրականացնել Սահմանադրական դատարանի որոշումը եւ հայ-թուրքական արձանագրությունները չվավերացնել առանց սույն հայտարարության մեջ նշված վերապահումների:
- Միաժամանակ ՀՀ Ազգային ժողովի քաղաքական մեծամասնությունից պահանջում ենք վերանայել «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ նախատեսող օրինագծի վերաբերյալ բացասական դիրքորոշումը:
- ՀՀ Ազգային ժողովից պահանջում ենք ընդունել Հայոց ցեղասպանության ուրացման համար քրեական պատասխանատվություն սահմանող օրինագիծը:

Ներկայացված պահանջները չկատարելու դեպքում մենք՝ արձանագրությունների կնքման դեմ համախմբված ուժերս, պատրաստակամություն ենք հայտնում ազգային շահերին սպառնացող ստեղծված վտանգի դեմ ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով չարգելված բոլոր միջոցներով պայքարելու մինչեւ ստեղծված վտանգների լիակատար վերացումը:

Մենք շնորհակալություն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր, գիտակցելով անհրաժեշտությունը, ամիսներ շարունակ մեզ հետ միասին պայքարել են դրված նպատակի՝ ՈՉ-ի այս պայքարը իր հաղթական ավարտին հասցնելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ այն բազմահազար քաղաքացիներին, ովքեր իրենց ստորագրությամբ ժխտում են այս տեսքով ներկա արձանագրությունների վավերացումը եւ նույնը պահանջում են մեծամասնական եւ համամասնական ընտրակարգով իրենց կողմից ընտրված պատգամավորներից:

«Ոչ»-ի շարժման 14 կուսակցություններ

Հայոց ցեղասպանության ազդեցությունը երգ-երաժշտության վրա

Ավո Գաբրճեան

Հալէպ, 2010թ., 620 էջ



Երգ-երաժշտությունը մեր կյանքի անբաժան մասն է: Արտահայտչամիջոց է: Մարդն իր ներքնաշխարհը փոթորկող ապրումները, հույզերը, իր ոգը, ցավը, վիշտը, պոռթկումը, բողոքը, ուրախությունը եւ սերն առանձնահատուկ մի մղումով արտահայտում է հենց երգ-երաժշտության միջոցով:

Ներկայացվող գրքում հեղինակը՝ Ավո Գաբրճյանը, փորձել է ներկայացնել Հայոց ցեղասպանության թողած ազդեցությունը ժողովրդական երգ-երաժշտության վրա՝ հետեւելով հայ երգի հոլովույթին եւ ուսումնասիրության նյութ դարձնելով երգը նախացեղասպանության հանգրվանից մինչեւ հայ սփյուռքի կազմությունը:

Հիմնվելով վերապրողների վկայությունների վրա՝ հեղինակը բացատրում է, թե ինչպես է հայ ժողովուրդն արտահայտել ցեղասպանությանը նախորդած դեպքերն իր երգերում: Ուսումնասիրությունը կենտրոնանում է նաեւ ցեղասպանությանը հաջորդած դեպքերի վրա, որոնց հետ ծնունդ առած հայերեն եւ օտարալեզու երգերը բացահայտված են ժողովրդային եւ ժամանակակից ոճով:

Ուսումնասիրելով Հայոց ցեղասպանության արտացոլումը երգ-երաժշտության տարբեր տեսակների վրա, հեղինակը նյութը ներկայացրել է որպես պատմավավերագրական կարեւոր աղբյուր: Ներկայացված երգերից շատերի երաժշտությունը օգտագործված է զանազան վավերագրական ֆիլմերում:

Այս ուսումնասիրության նպատակներից մեկն էլ՝ ցույց տալ տասնամյակների ընթացքում ցեղասպանության երեվույթի ընկալման զարգացումը երգ-երաժշտության մեջ եւ այդ կերպ օգտակար լինել Հայոց ցեղասպանության ճանաչման

գործին:

Ավո Գաթրճյանը շուրջ մեկ տասնամյակ երկարող իր այս աշխատության մեջ խորապես ուսումնասիրել է ավելի քան 200 երգ՝ օսմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, պարսկերեն, հայերեն, արաբերեն, թուրքերեն եւ այլ լեզուներով: Այս ամենին զուգահեռ նրա ուսումնասիրության նյութ են դարձել նաեւ դասական երաժշտության հիսուն զանազան կտորներ, շուրջ 150 երաժշտական ձեւավորումներ ու տարբեր ֆիլմերում ընդգրկված նվագներ: Իր աշխատանքի ընթացքում հեղինակը հաղորդակցվել է ավելի քան հարյուր արվեստագետի հետ, ովքեր ներկայացնում են երգ-երաժշտության ամենատարբեր բնագավառներ: Նրանք երգահաններ են, երաժշտական մեկնաբաններ, երաժշտության հիմքի վրա խոսք գրող բանաստեղծներ, բեմադրիչներ, դերասաններ, երգիչներ եւ այլն: Այսու մենք կարող ենք առանց վարանումի ասել, որ ի դեմս այս հրատարակության Հայոց ցեղասպանությունը վավերագրված ու արտացոլված է նաեւ երգ-երաժշտության մեջ:

Ավելի քան վեց հարյուր էջ պարունակող հրատարակությունը բաղկացած է հետեւյալ բաժիններից, որոնց վերնագրերը ստորեւ ներկայացված են.

1.- Ներածական

2.- Նախացեղասպանութեան երկու արարներու երգ-երաժշտութիւններ

3.- Յետցեղասպանութեան ժողովրդական եւ ժամանակակից երգ-երաժշտութիւններ.

ա.- Վերապրողներ եւ յուշեր

բ.- Ցեղասպանութեան ենթարկուած շրջաններու նուիրուած երգեր

գ.- Երէկուան եւ այսօրուան ժամանակակից ապրիլեան երգեր

դ.- Օտարներ, որոնք Հայոց ցեղասպանութիւնը կ՚երգեն

ե.- Հայեր, որոնք օտար լեզուով Հայոց ցեղասպանութիւնը կ՚երգեն

զ.- Հայոց ցեղասպանութեան նուիրուած զանազան երաժշտական կտորներ

4.- Հայոց ցեղասպանութիւնը դասական երաժշտութեան մէջ

5.- Մեծ եղեռնի շարժապատկերներու, ֆիլմաշարերու, վաւերագրական ֆիլմերու եւ թատերգութիւններու երգ-երաժշտութիւններ

6.- Կոմիտաս. 1915-ի Մեծ եղեռնի ականատեսն ու փրկուած «Զոհը»

7.- Հայկական զգայացունց դուդուկը Հայոց ցեղասպանութենէ ետք մեր վրայ աւելի վշտաբեկ եւ ազդեցիկ

8.- Հայոց ցեղասպանութիւնը եւ Հրանդ Տինքը (1.500.000 + 1)

9.- Հայոց ցեղասպանութեան հակազդող թրքական գեղարուեստական եւ «փաստավաւերագրական» խեղաթիւրուած ֆիլմերու երգ-երաժշտութիւններ

10.- Եզրակացութիւն

11.- Երախտագիտական խօսք

12.- Երգերու եւ երաժշտական կտորներու անուանացանկ

13.- Օգտագործուած աղբիւրներ

Ուսումնասիրության մեջ ներառված երգ-երաժշտությունների մասին ամբողջական ծանոթություն տալու նպատակով գրքում տեղ են գտել պատմական եւ աշխարհագրական մանրամասնություններ այն երգե - րի վերաբերյալ, որ նվիրված են ցեղասպանության ընդգրկած շրջաններին եւ քաղաքներին: Տրված են նաեւ այն երգիչների, խոսքերի հեղինակների եւ երգահանների կենսագրականները, ովքեր ներդրում են ու - նեցել Հայոց ցեղասպանությունը երգի շնորհիվ արտացոլելու գործում:

Ավելացնենք նաեւ, որ գիրքը հրատարակվել է Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի առիթով:



Մկրտիչ Սեդրակյան

1922-2009

1915



Ծնվել է 1922 թ. Էջմիածնում:

Նախնական կրթությունը ստացել է Էջմիածնում, այնուհետև 1932թ. տեղափոխվել է Երևան և ուսումը շարունակել Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:

1938թ. ընդունվել է Երևանի Գեղարվեստի ուսումնարան, 1941թ. չավարտելով ուսումնարանը կամավոր մեկնել է ռազմաճակատ:

1941-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով և մեդալներով:

1946թ. զորացրվելուց հետո ընդունվել է Երևանի Գեղարվեստի ինստիտուտ, որն ավարտել է 1952թ., նույն թվականին դարձել է ԽՍՀՄ նկարիչների միության անդամ:

1967-2008թթ. դասավանդել է Երևանի Գեղարվեստի ակադեմիայում:

1967թ. արժանացել է Հայաստանի վաստակավոր, իսկ 1985թ. Հայաստանի ժողովրդական նկարչի կոչման:

1983թ. արժանացել է դոցենտի, իսկ 1991թ. պրոֆեսորի կոչման:

Ունեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ հայրենիքում և արտերկրում՝ Երևանում և Էջմիածնում, Սան Ֆրանցիսկոյում, Սան Խոսեում, Լոս Անջելեսում:

ԴՐՈՇԱԿ

Պատկերասրահ









ԴՐՈՇԱԿ

Kiev
UKRAINE
Kharkiv
MOLDOVA
Chisinau
Donets'k
Volgograd
Rostov
Odesa
Sea of Azov
Black Sea
GEORGIA
Tbilis
İstanbul
Bursa
Ankara
YUGOSLAV
MACEDONIA